

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## Զ Վ Ե Ր Զ Ա Ց Ա Ի

Փրանսայի Հանրապետութեան Կ. Պոլսոյ ներկայացուցիչ Պ. Փանպոն նոյն պաշտօնով Լոնտոն փոխադրուեցաւ: Հայկական տոմարն հանդիսատես ու անոր մէջ դերակատար դեպքաններն այս չորրորդն է որ կը հեռանայ արինի թատերաբեմէն: Միւս երեքն էին գերմանականը, ռուսականը, անգլիականը: Տաամը սակայն չէ լմնցած. միջնարարի մը պահուն կը պատրաստուի չորրորդ արարուածը որմէ ետքը Տրոյ ին վարագոյրը պիտի բացուի, անշուշտ վերջինը: Սպասելով վերսկսումին, որ թերեւս շատ չուշանայ, առիթը ներկայացած ատեն նախորդ արարուածներէն ինչ ինչ տեսարաններ մեր յիշողութեան առջեւ բերենք ու անոնց վրայ խորհինք, վասն զի մենք ալ պէտք է մասնակցինք յաջորդ երկու արարուածներուն յորինումին:

\* \* \*

Ազգին մէջ համոզում մը կայ թէ մեծ պետութիւնները կանխամտածութեամբ մեզի խաբեցին: Ամէն տեղ եւ ամէն ատեն հանրային անսպասելի աղէտ է մը, մեծ յուսախաբութենէ մը ետքը այս տեսակ մտածութիւններ երեւան կուզան եւ կ'ընդհանրանան: Ինքնավտտահ բանակ մը երբ կը յաղթուի, զինուորը՝ կայծակնահար տպաւորութեան ներքեւ՝ դժբաղդութիւնը պետերուն մատնութեանը կը վերագրէ: Բանակ կամ ժողովուրդ՝ այսինքն ամբոխ՝ պարզապէս է: Պարտութիւն մը, քաղաքական թէ զինուորական, հետեւանք է բազմատեսակ հանգամանքներու որոնց կնճոտ եւ բարդ մանրամասնութեան քննութիւնը ու վերլուծումը այդ պարզապէս մտքին անմիջապէս հպելի չեն, մանաւանդ զայրոյթի տպաւորութեան ներքեւ: Ժամանակը միայն կը հաստատէ ճշմարտութիւնը:

Սասունի կոտորածով հայկական խնդրին վերաբացուելուն առթիւ պետութիւնները մեզի թակարդի մը մէջ ձգելու նկրտող քաղաքականութեան չհետեւեցան: Երիծաղի կը դառնանք մտքերնէն անցընելով թէ վեց մեծ պետութիւն Հայոց պէս ժողովուրդ մը խաբելու հարկին մէջ կրնան գտնուիլ: Քիչերու միայն յայտնի է, ան ալ մասամբ միայն, ինչ որ դիւանագիտութեան նրբանցքներուն մէջ կ'անցնէր կը գառնար 1894էն 1896: Զուշաւորու-

թեան պահանջած սահմաններուն մէջ այդ տեղեկութիւնները կամաց կամաց պիտի յայտնուին. ատոնք կը վկայեն մեր դատին նկատմամբ պետութիւններուն օրուան անկեղծութեանը: Բայց եկաւ օր մը որ պետութիւններու միջեւ ծագած ուրիշ կնճոտութիւններ անոնց փոխադարձ յարաբերութիւններուն հետ փոխեցին նաեւ, զոնէ առժամակէն, հայկական խնդրին համար անոնց տրամադրութիւնը: Սուլթանը այդ ժամուն վրայ յուսադիր էր. ու ինքն էր որ ճարպիկ դիւանագիտութեամբ մը ժամանակ շահելէ յետոյ օր մը յանդուգն խաբեբայութեամբ մը Եւրոպայի ներքին տիրութիւնը փորձեց եւ ապահովուեցաւ:

Երեք պետութիւնները յամաօրէն Մայիս 11ի ծրագրին ստորագրուիլը կը պահանջէին. վիչհեղձ կայսրը իսկ սուլթանին մաերմաբար համաձայնութեան խորհուրդ տուած էր: Կացութիւնը յուսադիր կ'երեւնար: Թարգմանները իրարու վրայ ամէն օր Բերա կ'երթային արտաքին դործերու նախարար Թիւրխան փաշայի տունը վերջնական բանակցութիւններուն համար: Ամրան զիշեր մը վճռական պատասխանը ստանալու գացին: Միւս օրը քաջ իրագիկ անձ մը հաղորդեց թէ սուլթանին պատասխանը բացարձակապէս մերժողական եղած է: Տխուր լուրը պատրիարքին հաղորդելու համար մեկնեցայ Գուլ-Գարու: Սիրքէճի կայարանէն ինծի հետ շոգեկառք նստան Գաղաքական ժողովէն երկու Գատրդեղի անգամ. անոնք ալ Գուլ-Գարու կ'երթային: Պատրիարքը Գաղաքական ժողովին անմիջական դուժարումի հրաւեր խրկած էր. «Աղտը լուր մը ունենալու է» կ'ըսէին ուրախութեամբ: Չուզեցի բան մը ըսել. անոնց զգացումները աղէկ կը ճանչնայի. չափազանց պիտի վշտանային. դուժանի պաշտօնը սիրելի չէ ինծի: Հասնելով պատրիարքարան խնդրեցի պատրիարքէն անմիջապէս ընդունիլ իս, ժողովականներէն առաջ: Մտնելով պղտիկ սենեակը ուր Հայաստանի կեանքը կը յուզուէր, զարմացած մնացի, մըտքէս անցաւ ետ դառնալ առանց բան մը ըսելու: Իզմիրլեանի վշտակիր ու ամիսներէ հետէ մշտամառայ դէմքին վրայ հիմա զուարթութիւնը կը փայլէր, յաղթանակի մը գոհունակութեանը բոլոր արայայայտութիւններովը: Ներքի չէր սակայն ձգել դուրս ելլել առանց կենսական կարեւորութիւն ունեցող բան մը ըսելու: Համառօտաբար հաղորդեցի ազգային դժբաղդութիւնը: Պատրիարքը աղէկ դիտէր թէ մեր գրական բարեկամներու խումբէն ինչ որ ի-

րեն հաղորդուեր միշտ շիտակ կ'ըլլար. եւ սակայն երբ խօսքս վերջացուցի դէմքը չմթաղնեցաւ:

— Այս առաւօտ, ըսաւ պատրիարքը ծանր ծանր, Սըր Ֆիլիբ Գըրրին անապարանքով Մոստիչեան էֆէնտին ուզած էր: Ուրախութեամբ անոր հաղորդեց թէ երէկ գիշեր Թիւրիսան փաշա թարգմաններուն պաշտօնապէս ծանուցեցր է սուլթանին հաւանութիւնը ծրագիրը անփոփոխ ընդունելու: Տարակոյս չիկայ թէ հիմա այս պահուստ արդէն ստորագրուելու վրայ է: Սըր Ֆիլիբ Գըրրի ինք ուզած էր ամէնէն առաջ այս աւետիսը տալ Հայոց պատրիարքին, իմացնելով միանգամայն որ երկու օրէն, հինգշաբթի, անձամբ շնորհաւորութեան պիտի գար: Ես ալ Քաղաքական ժողովին անդամները հրաւիրեցի աւետիսը անոնց տալու: Կարելի է որ սխալ ըլլայ յատկապէս հաղորդուած այսպիսի պաշտօնական զեկուցում մը: Դեռ պահները արդէն այս լուրը երէկ գիշեր իրենց կառավարութիւններուն հեռագրած են:

— Կը փափաքէի որ աս անգամ մենք խաբուած ըլլայինք, սրբազան, պատասխանեցի. բայց Թիւրիսան փաշա ղեկավարները խաբեր է:

Պատրիարքը կ'աճապարէր բոպէ մը առաջ ուրախացնել ժողովականները եւ անոնց միջոցաւ ազգը: Աջը համբուրեցի եւ դուրս ելայ, անհուն տխրութեամբ մը համակուած, զգալով մանաւանդ թէ ետքէն հակահարուածը ս'ըջափ ծանր պիտի գար ազգին սրտին:

Այդ երեքշաբթի իրիկունը Պոլսոյ ամբողջ Հայութիւնը ցնծութեան մէջ էր: «Ստորագրուեցաւ, աչքերնիս լոյս» կ'ըսէին ամենքը իրարու, հռատքի օրերու Քրիստոս-Յարեաի աւետիսը:

Հինգշաբթի օրը Սըր Ֆիլիբ Գըրրի պատրիարքարան շնորհաւորութեան չեկաւ:

Այն պահուն որ Եւրոպայի գահլիճները իրենց կ'Պոլսոյ գեսպաններէն հեռագիր կը ստանային Մայիս 11ի ծրագրին համար սուլթանին վճռական Հաւանութիւնը ծանուցանող, անդին օսմանեան գեսպաններուն կողմէն պաշտօնապէս կը հաղորդուեր այդ միեւնոյն գահլիճներուն Մայիս 11ի ծրագրին համար սուլթանին վճռական մերմուրը:

Պետութիւնները իրենց գեսպաններուն եղած այս նախատիւրքին համար ձայն չհանեցին: Սուլթանը իր փորձին մէջ յաջողած էր: Պետութիւններու ներքին տկարութիւններու մասին ապահով էր ա'լ:

Ինչ շահեցաւ սուլթանը:

Այդ նախատիւրքէն երեք տարի ետքը այդ միեւնոյն պետութիւնները Կրեաէէն սուլթանին զինուորներուն ահանջէն բռնելով դուրս նետեցին, ու հոն քրիստոնեայ իշխան մը կառավարիչ խրկեցին առանց մտաբերելու թէ Պոլիս սուլթան մը գոյութիւն ունի: Օսմանցիներու պատմութեան մէջ այսպիսի նախատիւրքի մը օրինակը երբեք չէր տեսնուած:

Վերջացաւ: Ո՛չ: Մակեդոնիան կայ եւ Հայաստանը: ԱՐՓԻՍՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի Ն

Բարի՛՛ փոքրիկ պանդոկի մը խցին մէջ տեսայ զանի՛ ուր ուրիշ այնչափ փախստական Հայեր ալ տեսնելու առիթն ունեցած էի: Ո՛րչափ տխուր էին այդ տեսակցութիւնները: Պանդխտութիւն, միայնութիւն, երկրին սովորութեանց անհամարութեան վեհերոտութիւնը կ'երեւնար բոլոր այդ նորեկներուն վրայ՝ որ շատ չէին խօսեր, եւ հարցուփորձ կ'ընէին զքեզ մինչեւ անգամ ամէնէն չնչին մանրամասնութեանց վրայ, գրեթէ տղոց նման շուարած ու շփոթած: Յաճախ մտ մը միայն կը վառէր սենեկին մէջտեղ՝ հազիւ հազ լուսաւորելով կանանչագոյն թաշէ հնցած կահ կարասիքը: Ամէն կողմ տհաճոյ եւ ոսովական մաշում մը կ'երեւնար արձաններուն վրայ: Ովե՛ր նստեր էին այդտեղ — սովորական անցորդ մարդիկ, սրտնց հոգիէն մուրական բան մը կը մնար պղտոր հայելւոյն մէջը՝ որ պատին յեց կը կանգնէր:

— Օրիորդ Շահրիկեան, ըսին ինձի:

Երկար, սեւազգեստ աղջիկ մըն էր մշտական սղաւորի նման, խանձած, եւ յաճախ թեթեւ մը կը հազարձեռքը բերանը տանելով: Թիկնաթոռի վրայ նստած էր անձայն՝ մասնեղն իրար ընդելուզած: Առջին գիրք մը բաց կեցած էր, ուր էջերուն վրայ մազի ասեղ մը ինչպէս կ'երեւնար:

Սկսանք խօսիլ — շուտ մը կերպարանափոխ եղաւ: Եւ նշմարեցի զսպուած աշխուժութիւն մը անոր սրտին մէջը՝ որ զիս հրապուրեց: Աշուրները մանր թէեւ՝ այլ վառվառն էին եւ լի հրով: Բարեհաճոյ բնութեամբ կին մը կ'երեւնար ան, եւ միանգամայն ամուր հաստատակամ:

— Ի՛նչ կայ Պոլիս, հարցուցի, նս՛ր ելաք անկէ:

Պատմեց որ կոտորածին ատեն փախիւր էր, գացեր էր Պուլիարիա եւ անկէ եկեր էր Բարի՛՛ ուր քիչ ատեն պիտի մնար ու պիտի երթար Անգլիա: Դա այն ողբալի ճանապարհորդութիւնն էր որ այնչափ Հայոց սովորական ուղեգիրք դարձեր էր ա'լ: Աշխարհ կը կտրէին սենեկէ մը սենեակ երթալու պէս, եւ անօդուտ տեղը: Օրիորդ Շահրիկեան չէր գիտեր թէ ի՛նչ պիտի ընէր, սակայն կը յուսար Անգլիա ապրուստը ճարել կար կարելով:

— Ի՛նչ կ'ընէիք Պոլիս, հարցուցի:

— Վարժուհի էի, պատասխանեց, եւ ծաղկոց մը կը վառէի: Ա'լ կը ցաւիմ որ փոքրիկներս այնտեղ անխնամ մնացին. հաւատացէ՛ք ամէնէն մեծ վիշտս այդ է — ինքզինքս այնչափ չեմ հոգար:

— Կը հասկնամ, ըսի, այդ զգացումը: Շատ կապուած ըլլալու էք այդ սիրուն արարածներուն: Տղայոց հետ միշտ ապրողը թեթեւ եւ միամիտ հոգիներու սիրող կը դաճնայ, եւ այնուհետեւ ա'լ դժուար է իրեն համար դառնացեալ մարդոց հետ յարմարելը՝ որոնց ամէն խօսքը խորամանկութիւն մը կը պարակէ եւ անդու կը նսր: Իրենց նպաստատու կերպով մը երեւիլ:

—Թեպէտեւ ուղիղ է ձեր գիտողութիւնը, զրուցեց օրիորդ Շահրիկեան, սակայն այդ չէ ճշմարիտ պատճառը իմ վշտիս: Ես ամէն ջանք կը գնէի այդ կահուղ հոգիները ձեւացընելու, կամաց կամաց զօրացընելու, իմ գաղափարիս համեմատ կերպացընելու: Դաստիարակութեան լաւագոյն ժամանակը մատաղ մանկութիւնն է: Այդ քնքուշ տղոցմէ իբրեւ փոխարինութիւն կը ստանայի այնչափ խորունկ մեծարանք, այնչափ խորունկ սէր ու գորովանք որ երբեմն ասոնց մայրերը կը նախանձէին զիս:

Ինծի կը փարէին մանրիկ թաթիկներով, շրջազգեստս բռնած, հատկիւն շնչով մը կը պագնէին զիս՝ երբ գահոնք զիրկս կ'առնէի ինչան զոհունակութեան: Թոյլ տալ որ հետս շրջազային պտոյտի ժամանակ՝ ամենամեծ պատիւ մըն էր, զոր շատ լաւ գիտէին գնահատել: Տեսնելու էր ինչ խորխորանքով կը քալէին քովս ի վեր: Գլուխներն վեր բռնած՝ ինծի կը փակչէին, եւ ամէն մին կը ջանար միւսէն աւելի իմ մօտէս երթալ: Յետոյ նաւախաղ կը խաղայինք: Փոքրիկ սայլակ մը ունէինք որուն մէջը կը նստէի: Կը սկսէին քաշել զայն — ես հրամաններ կու տայի, զէպի աջ կամ զէպի ձախ դառնալ կը հրամայէի եւ կ'երթայինք: Ամէն ամթոն նաւահանգիստ մըն էր. կանգ կ'առնէինք: Մեքենան ծուխ կ'արձակէր. նաւակներ կը մօտենային ճամբորդները առնելու եւ սակարկութիւն կ'ընէինք:

Յանկարծ ես ծովը կ'իյնայի, այսինքն սայլակէն դուրս կ'ելլէի եւ զետիւնը կը նստէի: Այն ատեն ամենքը մէկանց կ'արարային զիս ազատելու: Անութիւններէս կը բռնէին եւ կ'աշխատէին զիս գեանէն վերցընել: Ես խզուիլ կը կեղծէի, կը ծանրանայի եւ անհնարին կ'ըլլար զիս տեղէս շարժել: Բայց յանկարծակի ոտքի կ'ելլէի եւ կը սկսէի վազել՝ բոլոր սանիկներս ետեւս քարշ տանելով:

Անշուշտ կը ծիծաղէի մտովին՝ որ այս ամէնը մանր մանր կը պատմեմ, բայց զիտնաք ինչ անուշ եւ միանգամայն զուարճալի են այս յիշատակները: Կարծեմ միայն տղաքը սիրել գիտնի:

Օր մը հատ մը ելակ գտայ պարտէզին մէկ անկիւնը: Բոլորս կանչեցի մանկիկները. կարգաւ շարուեցան: Ըսի թէ այդ ելակը ամէնուն պիտի բաժնէի որպէս զի զիրար չնախանձէին: Հանեցան: Ամէն մին եկաւ մատիս ծայրէն լընել ելակի նշմարանք մը եւ զոհ եղաւ: Այդչափ արգեօք տարբերութիւն ունին մեզմէ որ երջանկութեան զանակ մը հազիւ հազ կընանք զտնել մեր ճամբուն վրայ:

Բայց ամէնէն աւելի կը սիրէի ինը տարեկան մանչ տղեկ մը՝ որ երածշափ զաւակ էր: Ան ինչ սիրուն երեսուակ մը ունէր, թուխ թուխ փայլուն աչուրներ — ինչչափ խելացի էր:

Շատ անգամ կը խօսէի անոնց հայրենասիրութեան վրայ, թէպէտեւ մանկական բարբառով բայց խորհրդաւոր լրջութեամբ: Այնպէս որ ամենքն ալ ծանր կերպարանք մը կը ստանային երբ Հայաստանի խօսքը կ'ընէի: Իմ փոքրիկ Լեւոն կը մամտար, կարծես ամէնէն աւելի խելահաս կը թուէր, եւ կարծես խորապէս կը զգար մեր ազգին թշուառութիւնը:

Անգամ մը մօտս եկաւ, ու խօհուն երեսով մը ըսաւ.

—Օրիորդ, ես զօրավար պիտի ըլլամ, միաքս զրի: Զինուորներուս զուլը անցած պիտի երթամ Հայաստանը ազատելու Տաճիկներուն ձեռքէն: Ըսէ, օրիորդ, կըրնամ զօրավար ըլլալ՝ անանկ չէ:

Ես մազերը շոյեցի ու պագի գունչը: Ուրախ էր եւ քաջալերուած: Օր մըն ալ տեսայ որ խոհանոցի խոշոր պանակ մը ձեռքն առեր եւ հացի շօթի մը մէջը կը մխէր կը հանէր:

—Ատ ինչ կ'ընես, պոռացի, Լեւոն:

—Տաճիկ կը սպաննեմ, պատասխանեց:

Կազանդի մը գիշեր հօրմէն զմելի մը պարզու ստացաւ: Խեղճ տղայ, ինչ փորձանք բերաւ զլիտն: Միջօրէէ մը ետքը, տանս պատուհանը նստած էի, նշմարեցի Լեւոնիկը որ փողոցին զլիւն վար կ'իջնար: Այդ պահուն քանի մը թուրք տղաք թաղին ճամբուն երկայնքը վազող ջրին հետ կը խաղային: Տղմով պատնէշ մը կը շինէին եւ մէջտեղը փայտազործ ծորակ մը կը մտցընէին՝ որուն բերանէն կը վազէր նուաճած ջուրը:

—Ինչո՞ւ հոգ կեցեր ես, կեա՛ւուր, պոռացին շան ձագերը իրենց սովորական կոշտութեամբ:

Տղուն աչուրները պլպլացին: Գունաթափ եղաւ: Եւ յանկարծակի կատաղութեամբ մը վրանին յարձակեցաւ:

—Գարշելիներ, պոռաց, զիս կը նախատէ՞ հա՛: Ատեն չունեցայ տեսնելու թէ ինչ կ'ընէր: Բայց զըրպանէն հաներ էր զմելին եւ հակառակօրգներէն մէկուն վրայ վազելով՝ բռնեւ էր ականջէն ու զայն կը սղոցէր: Ան սկսաւ ճշել աղաղակել — արիւնը բերնին մէջը կը կաթէր:

Միւսները սկսան Լեւոնը քարկոծել: Ես փողոց վազեցի, զրացիներն ալ դուրս ելան: Բայց սուր քար մը ճակատը ճեղքեւ էր. զետին ինկաւ: Սրիկաները փախան: Հասայ թեւերուս մէջ առի զանի եւ տուն փոխադրեցի: Ուղեղը դուրս թափեւ էր եւ ոտայի նման երեսիս կը փակչէր: Ինչ խնամք չտարի: Շտապեցի զգեստս պատռեցի եւ կտաւի կտորով մը ճակատը կապեցի, անօգուտ տեղը: Աչուրներս լալէն չէին տեսներ...

—Ինչ եղաւ խեղճ Լեւոնը, հարցուցի յուզմամբ:

—Մեռաւ: Մեռաւ խեղճ տղան. հայրն ու մայրը եկան զարհուրելի աղաղակներ արձակեցին: Բայց իմ արցունքներս յանկարծակի ցամքեր էին. ակնապիշ կը նայէի իմ սիրականիս եւ երբեք ըմբոստութեան հոգին այնչափ վեհ երեւցած չէր ինծի՝ որչափ այդ փոքրիկ արարածին անկարող զայրացման պահուն:

Բո՛ւվ մը լոնց, յետոյ մըմաաց.

—Անուշի՛կ զաւակս:

Բարիկ. ՎԱՀՐԱՄ ՍՎՍՃԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 24 նոյեմբեր 98

Չհասկցուած վիճարանոտրիան մը. — Տգետ եկեղեցւոյ  
կանր և ոռտեսլը. — Անուաններու նշանակոտրիանը. — Ան-  
հասկեալի հայերէն մը. — Հասնով վերջարան մը:

Մշակի մէջ ամիսներ տեւեց ուսեալ եւ անուս քահա-  
նաներու խնդիրը: Կամ աւելի ճիշդը պատերազմը, որ  
ուր ուրեմն վերջացաւ ոչ թէ «առ ի չգոյէ մարտնչողաց»  
այլ մանաւանդ շնորհիւ կոուտղներու թիւին յորդառա-  
տութեանը: Մեր Ծիրանի Գօտին ծնունդէն մինչեւ ժա-  
մանակակից քիմիագիտութեան վերջին խօսքը, Նաւեայ  
որդւոյն արեւուն տուած ծանօթ հրամանէն մինչեւ «եւ  
սակայն կը շարժի»ին յամառութիւնը, ճամբան Քանդոն  
ալ կարաւանին կցելով, ամենքն ալ հարկատու եղան  
հայ տէրտէրին համար զիտութեան պէտքը կամ տգի-  
տութեան կարեւորութիւնը փաստաբանելու տաժանակիր  
աշխատութեան: Արտայայտուած բոլոր համոզումներէն  
— ուսահայ մը կարծիք չի կրնար ունենալ հապա համո-  
զում միայն — ինծի անհնարին եղաւ հասկնալ թէ վեր-  
ջապէս ի՞նչ կ'ուզէին, ուսեալ թէ անուս քահանայ:

Վիճաբանութիւնը Եւրոպա վերաբանալու փորձու-  
թենէն չեմ բռնուիր, բայց կը մտածեմ թէ արդեօք մեծ  
յառաջդիմութիւն մը ըրած պիտի ըլլանք երբ հայ տէր-  
տէրին ու անոր հետ հայ զիւղացիին սիրտը կոտրենք ա-  
նոնց իմացնելով թէ Ծիրանի Գօտին Աստուծմէ Հայաս-  
տանի պարզեւ շքանշանը չէ, այլ թեզկեանի մը վրայ գոր-  
ծուած երկններանգ կերպասի պէս բան մը: Քիչ մը իրա-  
ւունք չունէր բանաստեղծը որ զիտուններու եւ զբազետ-  
ներու խնջոյքի մը մերժեց Նեւտոնի բաժակ պարպել,  
վասն զի Ծիրանի Գօտին ներքին գաղտնիքը երեւան  
հանելով մեծ Անգլիացին բան մը պակսեցուցած էր մարդ-  
կութեան բանաստեղծական ժողովութենէն:

Ու յետոյ, շարժունը արեւն է թէ երկիրը: Տակնու-  
վրայ շրջողը հիմկուհիմա մեր խենդուկ մուրախը կը  
կարծուի, բայց արգելք մը չի կայ ննթաղրելու թէ օրին  
մէկը ուրիշ գիտուն մըն ալ նոր ճշմարտութիւն մը ձեռք  
ձգելով կալիլէոսն ալ Յիսուսին քով պիտի չխրկէ, կամ  
թէ Յիսուսը կրկին ձերմակերես պիտի չհանէ: Այս վեր-  
ջին հաւանականութիւնը խելքի հակառակ չէ: Մարդկու-  
թիւնը բնագոյով տակաւին սպասողական զիրքի մէջ է ա-  
րեւին կամ երկրին շարժունութեան մասին, և անոր հա-  
մար է որ խոհեմութիւն չէ համարած արեգակին հետ իր  
ամէնօրուան յարաբերութիւններուն բացատրութիւնները  
բարեփոխել: Դեռ ամէն լեզուով «արեւը կ'ըլլէ», «արեւը  
կը մտնէ»: մտնելու եւ ելլելու գործողութիւնները շար-  
ժումով կը կատարուին. անշարժը ի՞նչպէս կը տեղափոխ-  
ուի: Զի կայ ժողովուրդ մը, գոնէ քաղաքակիրթ կոչուող-  
ներուն մէջ, որ իրիկուն ըլլալը իմացնելու համար ըսէ.

«Երկիրը զլիւլար դարձաւ»: Յիսուսի եւ կալիլէոսի մի-  
ջեւ հաշտարար քաղաքականութեան մը կը հետեւինք,  
ի՞նչ կ'ըլլայ ի՞նչ չըլլար. ուստի Երկիրը կը դառնայ բայց  
Արեւն է որ կը շարժի:

Ի՞նչպէս կ'ուզէք որ խեղճուկ հայ տէրտէրը այս նըր-  
բութիւններուն խելք հասցնէ: Եւ այս ամէնուն հետ, ա-  
րեւն է թէ աշխարհը շարժունը, Հայաստանցիին ի՞նչ հո-  
գը: Խալամները անարգել կը ջարդէին Հայերը երբ երկիրը  
անշարժ էր ու արեւը փոփոխական. խալամները անարգել  
կը ջարդէին Հայերը երբ արեւն է անշարժ ու երկիրն է  
փոփոխական:

\* \* \*

Գիտութենէն աւելի հաւատք պէտք է եկեղեցականին.  
ճշմարտապէս հաւատացող եկեղեցականն է միայն իր կո-  
չումին մարդը: Միտքը երբ զիտութեամբ ընդլայնի հա-  
ւատքը կը կծկուի: Եկեղեցականը որ քննող է ա՛լ ներ-  
շնչող չէ. ու կրօնքը ներշնչումի բանաստեղծութեամբ  
կ'ապրի եւ կ'ապրեցնէ: Միշտ ձանձրոյթով մտիկ ըրած  
եմ ուսեալ բայց չհաւատացող եկեղեցականին քարոզը:  
Տգետ բայց հաւատացող եկեղեցականին խօսքերուն մէջ  
մանկական միամտութեան անուշ հրապոյրը կը զգամ  
երբեմն: Երբեք յօղուած մը չեմ կարդացած պաշտելի  
անմեղութեամբ այնքան լեփլեցուն որքան զեղուն էր Ա-  
շտգեան Խորէն եպիսկոպոսին հերու Պոլսոյ թերթի մը  
մէջ այն հրատարակութիւնը որով զուակ ունենալու ան-  
հրաժեշտ պայման մը չէր նկատեր թէ՛ երկի թէ՛ կնիկ-  
մարդուն միահաղոյն դոյութիւնը. մինչեւ անգամ առանց  
ասոնց միջամտութեան ալ մարդկութիւնը կրնայ աճիլ  
ու բազմանալ: Երբ պէտք զգացուի Աստուծոյ քարերէն ալ  
մարդ կը շինէ, կը յայտարարարէր նախկին պատրիարքը.  
«Ի քարանցս որդիս Աբրահամու:» Ընդունինք թէ այս  
յայտարարութիւնը սովորական մտածութեան մը ծնունդ  
չէ: Անկեղծ կրօնամոլին համոզումներուն մէջ խելքէ մտքէ  
չանցած բան մը կայ որ նորութեան համը հոտը ունի:  
Եւ ո՞ր ճշմարիտ քրիստոնեան կրնայ հերքում տալ Աշտգ-  
եանի տրամաբանութեանը: Ո՞չ ապաքէն ան սր քրիս-  
տոնեայ է պարտաւոր է հաւատալ թէ մարդը հողէն դոյու-  
թիւն առաւ աստուածային շունչով. ափ մը հողէն մարդ  
ստեղծող Արարիչը սքանչելապէս կրնայ քարէն ալ մարդ  
մը հանել. ու ինչո՞ւ հազարաւոր միլիոններով չհանէ.  
Շունչը անսպառ է, եւ մէկ հրամանը ամենազօր. «Եղի-  
ցի եւ եղեւ:»

Տգետ ու գիտուն եկեղեցականներու միջեւ հաւատքի  
տարբերութեան որչափութիւնը շատ աղէկ աչքին զարկաւ  
փորձառական ապացոյցով մը զոր զիպուածին պարտա-  
կան եմ:

Տասը տարի առաջ Պոլսոյ Պոյաճը գեղ թաղը կու-  
սակցական վէճ մը ծագեցաւ: Հայ ժողովուրդը իբրեւ ազգ  
ապրելու համար բաժանումի եւ կռուի կարօտ է: Պոյաճը  
գեղ տէրտէրը վարժապետէն աւելի խելճ էր ուստի փոթա-  
րիկն ալ անոր զուլիւր պայթեցաւ: Ազատական եւ պահ-

պանողական կուսակցութիւնները պատրիարքարան գիմե-  
ցին. Խորէն Նար-Պէյ եպիսկոպոսը քննիչ կարգուեցաւ:  
Այդ ատեն Պոյաճը զեղ կը բնակէի. տէրտէրը եկաւ ինձի  
գտաւ աչքերը լեցուած ու հասկցուց թէ սրբազանը խաթրու  
չի կոտորեր: Բաշալեանին հետ քննիչ եպիսկոպոսին խօսե-  
ցանք որ տէրտէրը մերն էր, — առանց շատ գիտնալու որ  
հակառակորդները պահպանողականներն են թէ ազատա-  
կանները:

Կիրակի առտու մը սրբազանը եկաւ. երկու կուսակ-  
ցութեան պարագլուխները էմիրկէն ընդատալ զաշով քըն-  
նիչը փառաբերապէս վեր տարին: Ես ու Բաշալեան ծա-  
ռերուն տակ նստած էինք: Ժամ մը վերջը Նար-Պէյ  
վար կ'իջնէր միս մինակ: Միացանք իրեն եւ ինզրին  
կարգադրութիւնը գիտնալ փափաքեցանք: Կեղծ բարկու-  
թեան շփացած ձայնով մը ըսաւ.

— Չղեցէք, ձգեցէք, աս ինչ ապուշ մարդ էր որ գէմս  
հանեցիք:

— Ինչ եղաւ, սրբազան:

Աչքերը չորս կողմը դարձուց եւ ապահովուելով թէ  
մենէ զատ ոչ ոք կար, բնական Խորէն եպիսկոպոսը ե-  
զաւ ու պատմեց: Շիտակ եկեղեցի գացած էր, երկու  
կուսակցութեան ներկայացուցիչները կանչած ու հաշտու-  
թիւն հրամայած: Պատասխանի ժամանակ չձեռնուիլ կը  
կը կանչէ տէրտէրը եւ կը հրամայէ համբուրուիլ ու պա-  
տարազը ընել: Հաշտութիւնը պիտի կայանար:

— Արձանի պէս գէմս կայնեցաւ, շարունակեց Նար-  
Պէյ: Տէր հայր, շուտ ըրէ, գնա՛ գեետաւորուէ, պա-  
տարագը ըրէ՛ կ'ըսեմ. անշարժ կեցեր է: Մէյ մըն ալ  
չըսէ՛ որ «Չեմ կրնար, սիկառ եմ ծխեր»: Ա՛լ ինչ պիտի  
ընէի, գործը արուեցաւ. պահպանիչ մը ըսի դուրս ելայ:

Ու բուն իսկական Նար-Պէյը երեւան եկաւ. այտերը  
ժպտալիբ ուռած, շրթունքները ամփոփեց, կլորեց, ու  
սկեպտիկի անուշ ժպտովը աւելցուց.

— Ապուշը. իրեն հարցնող կա՞ր որ սիկառ ծխեր ես  
թէ ոչ:

Ճշմարիտ քրիստոնեան, «գործին մարդը», այդ տգէտ  
տէրտէրն է, որ ինչպէս կը քարոզէ՝ անանկ ալ կը հաւա-  
տայ թէ ծովի մը գորտըին կ'ապականէ մաքրութիւնը  
հողին ուր ֆրիստոս պիտի գայ հանգչիլ, եւ ֆրիստոսի  
մարմինը կը տեսնէ այդ նշխարքին մէջ: Գուցէ պիտի ըսէք  
«նե՛ղ միտք». հաւանական է. բայց մարտիրոսները այդ  
նեղ մտքերէն կը ծնին. եւ ամէն հիմնարկութիւն, կրօնք  
կամ ազգութիւն, որ արիւնի շաղխով պիտի ամրանայ  
ու զիմանայ, այդ մարտիրոսներուն կարօտ է:



Երակներուն մէջ մարտիրոսութեան գոնէ քանի մը  
կաթիլ արիւն ընթացող հայ եկեղեցականութեան ցեղը  
վախնամ մարելու վրայ ըլլայ, առանց սակայն գոնէ ճըշ-  
մարտապէս գիտուններու զստակարգի մը փոխարինու-  
թեան. ու այդ շիջումին առաջին նշանները անուններու  
նորոյթին հետ կը զուգարկուին: Ամէն անուն գաղափարի

մը պատկերը աչքի առջեւ կը բերէ. աշխարհականը իր  
անունին պատասխանատուն չէ, բայց անուն մը որոշելու  
պահուն ծնողք ու կնքահայր կարծես բնազդէ մը կը մըղ-  
ուին: Խեղահաս մարդը որ եկեղեցականութեան մէջ մտած  
պահուն իր հաւանութեամբը կ'ընտրէ անուն մը, հաւա-  
նորէն մտատիպարի մը համար յարգանք կը տածէ. անոնց  
որոշումը մտքի ուղղութիւն մը ցոյց կուտայ, հոգեկան  
տենչանք մը երեւան կը բերէ. Մատթէոս կամ Սարգիս,  
Պօղոս կամ Գէորգ ներքին հակում մը վեր կը հանեն:  
Դիտած չե՛նք որ Ներսէս անունը ստանձնող եկեղեցակա-  
նը միշտ ժողովրդական եղած է, միշտ սիրելի, սկսած  
Անկէ որ Նպատ լերան վրայ Յիսուսի շարունակութիւնը  
եղաւ, մինչեւ մեր օրերու Տարօնեան Տարագիրը: Բոլոր  
Ներսէսները կարծես ներսէսեան տոհմային ազնուական-  
ութեան մը անունները պահպանելու ջանադիր կ'ե-  
րեին:

Ընդհանրապէս ոչ-զուտ ազգային բայց զուտ գաղա-  
փարային անուններու տակ ունեցանք կրօնասէր, զիմաց-  
կուն եկեղեցականութիւն մը. տկարացումի թուականը  
կը բացուի ազգային պատմական անուններու երեւումով:  
Ազգային-պատերազմական սուրբերու կեանքին ամբող-  
ջութիւնը զոհաբերութեան, տառապանքի անընդհատ  
շարունակութիւն մը չէ եղած. հանգստաւէտ կեանքով  
ապրողներ ասպետական զգացումէ մը, ինքնապահպա-  
նութեան հարկէն, կամ ո՛ր եւ է կրքէ մղուած — ըսենք  
եթէ կ'ուզէք ազնուական կրքէ — պատերազմեր են. այդ-  
պիտի անունի մը հովանաւորութեան տակ մանող եկեղե-  
ցականը առանց գիտնալու կը յայտնէ թէ «շուտ հասնե-  
լու» եռանդէն մղուած է: Եւստ հասնողի մարմնացումը  
Օրմանեան պատրիարքը չէ՞, ու այդ փափաքէն չէ՞ որ կը  
վարին Արմաշեան բոլոր ձեռնասունները որոնց անուննե-  
րուն մէջ Գրիգոր ու Պօղոս չի կան: Բայց շուտով պիտի  
ունենանք՝ Վահրիճ տեղապահ մը, Աղան պատրիարք մը,  
հաւանական չերեւիր: Ազգը անգամ մը պատմական ա-  
նունով պատրիարք մը ունեցաւ. Խորէն, ու պատմական  
անունով տեղապահ մը՝ Հմայեակ. համը բերանը մնաց:

Պատմական անունի հովանաւորութիւնը եթէ եկե-  
ղեցականներու համար թուլութեան թուականի մը բա-  
ցումին նշանն է, աշխարհականներու համար ալ առնա-  
կան վերանորոգումի սկզբնաւորութեան աւետարները: Ա-  
նոնք որ այսօր ազգին ազատասիրական շարժումը կ'ու-  
սումնասիրեն, կամ եթէ կ'ուզէք՝ կը քննադատեն, պէտք  
է անոր ծագումին առաջին նշոյնները քիչ մը աւելի հե-  
ռունները փնտռեն, այն օրերուն մէջ ուր կարապետին զա-  
ւակը Լեւոն եղաւ, Մարտիրոսինը՝ Վահէ, Մարկոսինը՝  
Գեղամ: Ազգային նոր հոգիի մը փթթումը պատմական  
անուններու սիրահարութեան մէջ կը ծլի կը ծաղկի: Ազգը  
կը սկսի գերութեան կեանքի յիշատակներու հետ կապ-  
ուած անունները կամաց կամաց թօթափել, ու իր ներքն-  
շարանը կը փնտռէ անուններէ որոնք չեն սրբապղծուած  
խալափին շրթունքներէն. թիւրքը Հայկ, Արմենակ, Արամ  
անունով հայ ստրուկ չէ ճանչցած. ուշագիւր չըլլա՞ք որ

կողմասի Հայերը ընդհանրապէս կը մնան Գրիգոր, Յա-  
կոբ, Պաղտատար, վասն զի քաղաքական ազատութեան  
ձգտում չունին:

Չեմ յիշեր օր մը որ աչքիս զարկաւ թէ Հայ ժողո-  
վրդին Հայկական եռանդը արծարծելու կամ բացատ-  
րելու համար պէտք չի կայ դիմել պատմական հին յիշա-  
տակներու. ո՞չ ապաքէն հիմակուան թարմ հերոսները  
հիները կը գերազանցեն: Չեմ դիտեր, թերեւ: Բայց ե-  
կու տես որ ազգային նոր կեանքի մը զարագուիւր ողջու-  
նելու աշխատողները՝ գործող, խորհող, մեռնող, ամենքն  
ալ հին կեանքի անուններու մէջէն կը փնտռեն իրենց զօ-  
րավիգը: Այդ հին հայ դէմքերը իրենց կը քաշեն նոր հայ  
սրտերը, վասն զի շինջ, սրբափայլ պայծառութեամբ կը  
ներկայանան մեր աչքերուն: Ժամանակը անոնց կեան-  
քին շրջագծերէն փտտեցուցած է ինչ որ մարդկային տկա-  
րութիւն է, անոնց ճակտէն սրբած է ինչ որ շատ սպիտակ  
չէ, ինչպէս այդ Ժամանակը զտէ, կը մաքրէ ածուխը, ու  
անոր տոկունութեան, պայծառութեան յատկութիւնները  
միայն կ'առնէ եւ կը ստեղծէ ազամանդը:



Ու միայն իր ազամանդի փայլովը չէ որ մեր աչքը կը  
խաղտեցնէ հին դիցուհիներս, որուն բարեխօսութեանը կը  
յանձնարարէ Արշակ Զօպանեան Գեղեցկասիրութեան  
զարգացումը Հայ ազգին մէջ. Հայ դրակահուութեան հա-  
մար եզական նորութիւն մը չէ՞ «Հանգև գեղեցկագի-  
տական» հրատարակութիւն մը, ապագային համար բա-  
րեգուշակ Գեղեցկին յաղթանակը կ'ազնուացնէ բարքերը,  
ու սրտերը կը բարձրացնէ այնքան վեր որ անմատչելի կը  
մնան ստորնաքարչ աղտեղութիւններու. քառօրդ զարու-  
սը հանրային կեանքիս մէջ շատ գէշ Հայեր տեսայ, բայց  
երբեք մէջերնին չհանդիպեցայ գեղեցկասէրի մը:

Գեղեցկութեան մայր քաղաքէն, Բարիզէն, նոյեմբեր  
Աին հրատարակուեցաւ «Անահիտ»ի առաջին թիւը, ուր  
ժամադրովայր եղած էին նրբութեան, գեղեցկութեան,  
արուեստի սիրահար երիտասարդները: «Անահիտ»ի մէջ  
հնութեան կեանքը իր հէքեաթներովը, զրոյցներովը,  
դիցազնբերութիւններովը ժամանակակից կեանքէն աւելի  
մեծկակ տեղ մը կը բռնէ: Հնութիւնը ներշնչարար ազա-  
տասէրներու, Հնութիւնը ներշնչարան գեղեցկասէրներու.  
եւ աս չէ՞ պատմական օրէնքը աղգերու երկարակեցու-  
թեան, միշտ շարունակութիւն, միշտ կատարելագործու-  
թիւն, միշտ բնաշրջում: Ու հին գոհարներու լոտունքնե-  
րէն չէ՞ շինուած այն դիւթիչ լեզուն որ կարգացողը կը  
հմայէ «Անահիտ»ի մէջ:

Մեր ժամանակակից լեզուին ու գրականութեան  
պատմութիւնը օր մը զրոյցները պիտի կասկածին թէ այլ  
քաղցրահնչակ լեզուն քաղաքական հալածանքներու են.  
Թարկուեցաւ, իբր Յեղափոխութեան ու Դատարարութեան  
խորհրդաւոր բարբառը Հայոց մէջ:

— Դուք ուրիշ Հայերէն կը գրէք, ձեր լեզուն ամէնուն.

գիտցած Հայերէնը չէ, կը մրմնային Պսլիա տպագրութեան  
թիւրք տեսուչները, ամէն անգամ որ «Հայրենիք»ին  
դիւտեցաւ կուտային, ազգարարութիւն կը խրկէին, դապա-  
րում կը հրամայէին: Այս անդրդուելի համագումին դէմ  
մաքառումը անօգուտ էր, արդարացումի փորձը ծիծաղելի:  
Թիւրքերը որ Հայերէն չէին գիտեր պարզ տրամաբանու-  
թիւն մը ունէին իրենց տեսակէտովը անմեղանչելի. «Ա-  
մէն լրագրի գրածները գրաքննիչ էֆէնտիները շուտ մը  
կ'ամփոփեն կամ կը թարգմանեն, իսկ ձեր գրածներուն  
մէջէն կ'ընեն կ'ընեն չեն կրնար ելլալ:» Ուրեմն դիւրին  
էր հետեւեցնել թէ մեր լեզուին տակը բան մը կար: Ի՞նչ  
պատասխանել. ե՛լ «Անահիտ»ի ճոգոնտային պէս գրուած  
մը շուտ մը թիւրքերէնի թարգմանէ կամ ամփոփէ եթէ  
կ'արող ես:

Օր մը ա՛լ անհերքելի փաստերով հաստատուեցաւ  
թէ արդարեւ «Հայրենիք»ի լեզուն խորհրդաւոր էր: Զօ-  
պանեան իր գեղեցկագէտի նրբաբանութեամբը 1893 մա-  
յիս Աին Հալքի կղզիին զիշերուան մէկ նկարագրութիւնը  
ըրած էր: Երազներ ու կանաչներ, կարմիր խաշխաշնե-  
րու գլուխներ զորոնք անգույն ձեռքեր կը կտրեն վար կը  
նեմեն, Լուսինը որ ամպերուն մէջէն անկարեկիտ կը սա-  
հի, վերջապէս այն բանաստեղծական գրուածքներէն մին  
որոնց առջեւ Ռուսիոյ Հայերը շուտաւ ապշած կը մնան՝  
սրտազին «Հոսհոսներ» մը մրմնալով: Եւ ահա երեք շա-  
բաթ վերջը, չորիքշաբթի օր մը, նախարարական ժողովին  
մէջէն իսկ Ներքին գործերու նախարար Խաչիկ Բիֆթաթ փա-  
շա հապճեպով հրաման կը փութացնէ տպագրական տես-  
չութեան «Հայրենիք»ը շուտ խափանել: Հրամանին հետ  
մէկտեղ ալ «Հայրենիք»ի թիւ մը կը խրկէ որուն մէջ  
կարմիր կապարով գծուած յօդուած մը պէտք էր անմի-  
ջապէս թարգմանել: Նախարարը ինքն ալ չէր գիտէր թէ  
ինչո՞ւ «Հայրենիք»ը գոցել կուտար. ոստիկանութեանէն  
գանգատ եկած էր, կարմրածիր թիւ մըն ալ մէկտեղ. կը  
բաւեր:

Իրիկուան դէմ է. տպագրական տեսուչը զող ելած  
«Հայրենիք»ի թիւը կուտայ Պառնասեան Լիֆէնտիին որ  
թարգմանէ: Խեղճ մարդը քառօրուան մը մէջ չի կրնար  
հինգ տող թիւրքերէնի վերածել. ու յօդուածն ալ քանի  
մը սինակ է. Հայ պաշտօնեան նեղը կը խոթեն. ի՞նչ  
ընէ, «Աս մեր գիտցած Հայերէնը չէ, շուտով չի թարգ-  
մանուիր» կ'ըսէ: — «Վա՛յ, անանկ մի: արդէն դիտէինք:»  
Նոյն միջոցիին մեր չար բազդէն «Մասիս»ի տէրը, Իւ-  
թիւնեան կարապետ, տպագրական սենեակէն կ'անցնի.  
տեսուչը օձիքէն կը բռնէ: Իւթիւնեան կէս դարու խմբա-  
գիր է, պատկանելի հայագէտ մը, ա՛լ Դուտն ալ գիտէ ա-  
նիկա: Պէհնէթ պէյ, տեսուչը, «Հայրենիք»ի թիւը առ-  
նելով Պառնասեանի ձեռքէն կուտայ Իւթիւնեանի, խնդ-  
րելով որ յօդուածին միտքը ըսէ իրեն: Իւթիւնեան մէյ  
մը կը կարգայ, երկուք կը կարգայ, ու ըիթը բերանը  
թթուեցնելով թերթը ետ կը զարձնէ:

— Էֆէնտիմ, բան մը չհասկցայ:  
— Բան մը չհասկցա՞ք. Հայերէն չէ՞ ասիկա:

— Էֆիենտիմ, հայերէն է, գիրերը հայերէն են, բայց մեր հասկացած հայերէնը չէ ասիկա :

Ինթիւնեան առանց շարամտութեան կ'ըսէր ասիկա . Չօսյանեանի ստորագրութիւնը բաւական եղած էր իր ջիւղերը գրգռելու : Աշխարհաբարի հին քրմայեալը անհաշար թշնամի էր նոր զրականութեան, նոր ոճին պայղուն հըրախաղութիւններուն :

Երկու քաջ հայագէտներու վկայութենէն յետոյ այլ ես տարակոյտ չի կար թէ « Հայրենիք » պայմանագրեալ լեզու մը կը գործածէր . թերթը զողորեցուցին : Ու ետքէն բացումի հրամանին համար պայման գրուեցաւ « ամէնուն հասկցած հայերէնովը գրել » :

Հետաքրքրական է անշուշտ գիտնալ թէ մայիս 1ի յօդուածին պայմանագրեալ լեզուովը ի՞նչ հասկցնել ուզուած է եղեր : Նախ՝ մայիս 1ը ընկերավարական նշանակութիւն ունի : Աս ձգենք . յետոյ : Այդ յօդուածը հրատարակուած միջոցին անդին Էնկիւրի ահեղ տուած մը կը կատարուէր . դատաստան մը ե կախաղան Հայոց համար, ինչ որ բոլորովին անձանօթ էր Պոլսեցիներուն : Բայց կառավարութիւնը կը կարծէր թէ մենք ամէն բան կրնանք գիտնալ, ուստի եւ « մեր լեզուովը » ժողովրդին ամէն բան կ'ուզենք հասկցնել : Հալքին՝ Էնկիւրին է եղեր . զըխատուած կարմիր խաշնաշները՝ կախուողները, ու ամպերուն մէջ պտուտող լուսինը՝ սուլթանը :

Աւելի համոզ վերջաբան մը չեմ կրնար գտնել :

ՀՐԱՉԳՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱՌԹԵԱՆ ԷՋԵՐ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Բ

Պղտիկի գիծերը . — Ծրագրին գործադրութիւնը . — Կառնուար վարչութիւնը . — Պետի մը ժամանումը . — Ուրախութեամբ օրեր . — Յարձակողական ինքնապաշտպանութիւն :

Օգտակար կը սեպեմ « Հրոսակի մը յիշատակներու » ձեռագրէն յիշել մանրամասնութիւններ սրտնց տեղ պիտի չի տայ ընդհանուր պատմութիւնը : Բայց բանտարկեալի մը փախուստին, յեղափոխականի մը գեղ մը սպրդելուն նկարագրութեանը մէջ կը պատկերանան հայ ժողովրդին հոգեկան տրամադրութիւնը, մտաւորական ուղղութիւնը՝ կեանքի արտակարգ շրջանի մը մէջ : Հայաստանի շարժումին գրուագիտներէն եթէ ժողովուրդը ճանչնալ կ'ուզենք՝ շարժամարհները պղտիկի գիծերը . անոնք են որ միանալով գեղերը կը յօրինեն :

Արտասահմանէն երկիր բերուած ծրագիրը որ թիւրքերուն ստացուածքին ոչնչացումը կը տրամադրէր՝ վտանգաւոր առաջնորդ մը պիտի ըլլար Արմուտանցիներուն :

Այդ ծրագրին գործադրութիւնը յանձնուեցաւ խումբի մը սրուն պեան էր Սարգիս անունով տասնընէր տարեկան պատանի մը, աչքը բաց, կրակոտ, վարպետարդի : Խումբին ձեռնարկներուն վրայ զաղափար մը տալու համար առաջ բերեմ անոր գործերէն մէկ քանին :

Թիւրքերուն եզները ցերեկը արծելէ վերջ իրիկունը փարախն էին մտած : Հովիւր կը քնանար զրան սեփին վըրայ . Սարգիս եւ ընկերները առանց անիկա արթնցնելու կը յաշտին չորս եզ փարախէն գուրս հանել, եւ ամենով ուրիշ տեղ մը մտնելու կը քերթեն եւ կ'աննեն կ'երթան : Աւարը, իրենց համար առանց ո՛ր եւ է օգտակարութեան, միայն թիւրքերուն ֆեստաբեր կրնար ըլլալ : Օր մը կը վերցնեն զեղը արմաթը ծախող թիւրքերու շորի մը . վրայի բեռը տեղ մը պահելով անասունը կ'արձակեն : Չարգուիւրչուր կ'ընեն հայատեաց թիւրքի մը այգին որուն բերքէն էր մարդուն ապրուստը : Գրգուած թիւրքերուն զիմուսին վրայ՝ ձեռքակալութիւններ կատարուեցան Արմուտանները : Բանտարկուեցաւ նաեւ Սարգիս ալ որուն անունը ամէն առթիւ կը յեղյեղուէր :

Նոր մեռնողի մը ութօրէքը լրանալուն՝ ազգական ու բարեկամ կիները զերեզմանը երթալով կուզան : Փետրուար թիւրքերուն կանուխ արմուտանցի կիներ հողմը տեղէն կ'ընկնէր համար . ձիւնը ամէն կողմ ծածկած էր . կիները նշմարեցին հեռուէն մարդ մը որ ձիւնին մէջէն սողալով կը յառաջանար : Մարդը մօտեցաւ, շնչասպառ, ցուրտէն կասկապուտ, զգեստները պատառ պատառ, կառավարութեան ֆեստակար անձ մը ըլլալը ճանչնալով՝ կիները ձգեցին փախան : Մէկը միայն, սրտոտ ու զգայուն, տեղը մնաց . փախստականը առաւ զաղտնապէս տունը տարաւ, եւ ձիւնէն սաստիկապէս մտոյններուն դարմանը գործադրեց . — մարդը ամբողջ մարմնովը, զուտը միայն գուրս, ազբի մէջ թաղեց ախոռը : Սարգիսն էր :

Նոյն իրիկունը ոստիկանները լեցուեցան Արմուտանները . ձեռքերնին հրամանագիր մը կար որով զեղացիներէն կը պահանջուէր փախստականը կառավարութեան յանձնել, հակառակ պարտադրին՝ թաղական խորհուրդները պատասխանատու ճանչնալով : Այդ միջոցին Սարգիս ախոռէն ելլելով ընկերներուն կողմէն Արաբկիր խըրկուեցաւ Շմաւոնէն ծրագիր ուղելու . շուտով վերագարձաւ :

Հայերը կը շարունակէին նիւթապէս ֆեստալ թիւրքերուն, բայց աւելի զգուշաւորութեամբ : Իսլամներուն դէմ իրարու յաջորդած յանկարծածին հարուածները կարելի չէր պարզ գողութեան հետեւանք համարիլ : Գործող ընկերները աւելի սերտ միաբանութեան եւ աւելի կանոնաւոր կազմակերպութեան պէտքը զգացին . ուստի տասնապետները Մեծ-Արմուտան գումարուելով հարկ տեսնուած կարգադրութիւնները ըրին : Գաղտնի քուէարկութեամբ երկու մարմին ընտրեցին, մէկը՝ վարչական, միւսը՝ գատական : Ասոնք Արմուտանի հայկական իշխանութիւնը կազմեցին : Հայ ժողովուրդը իր վէճերուն, իր գործերուն համար այլ եւս Տաճկին գուր չէր երթար . վարչութիւնը կը դատէր, կը սնորհէր ամէն գործ :

Ժողովին մէջ կարգացուեցաւ Պոլսէն հասած նամակ մը որ կը քաջալերէր բոլոր ընկերները: «Դուք ցանցեք արտերը, եւ անմշակ մի՛ թողուք, կ'ըսէր նամակագիրը, ժամանակն է: Ես լսելով ձեր մասին շատ ուրախ եղայ: Կը խնդրեմ մինչեւ իմ գալստ աշխատեցէք որչափ որ կըրնաք. ընկերներէս մէկը գալու է մօտակայ քաղաք մը կազմակերպութեան համար. ես անոր նամակներ կուտամ. ծանօթացէք ու մէկտեղ գործեցէք:» Ստորագրուած էր Վահան Պէյլերեան: Նամակագրին ազգեցիկ անձնաւորութիւն մը ըլլալը նամակին ոճէն կ'երեւի: Ժողովականները շատ ուրախացան, ու աւելի զօրացած զգացին իրենքզիրենք:

\* \* \*

Ս. Գէորգի տօնին օրն էր. Արմուտանցիները ամենքն ալ զեղէն երեք ժամ հեռու Ս. Գէորգի մատուռին շուրջը հաւաքուած, հոն պիտի գիշերէին: Արեւը մարը մտնելու վրայ էր. ամէն կողմ խոշոր կաղնիներու տակ ընտանիքները խումբ խումբ նստած կրակը վառեր էին ու խօրտիկներ կը պատրաստէին. երգ, պար, ցնծութիւն: Անդին մատուռին դրանը առջեւ զեղին մազերով, արծուեռունգն, միջահասակ սարդ մը կայնած էր, ձեռքը կապոց մը. «Աղուօր եագմաներ ունիմ, քրուրտանք» կ'ըսէր երբեմն երբեմն: Մարդը յոգնած կ'երեւնար, կոնակը քարին էր տուեր եւ ուզելով շուգելով կը կանչէր: Օդը ցուրտ էր. ամէն մարդ կրակին բոլորտիքը շարուած կը տաքնար. եագմանին ալ գնաց մօտակայ կրակի մը շուրջը ծալլապատիկ նստաւ: Իրեն ալ մատաղ հրամցուցին. «Լաւ կուլի» ըսելով ճաշեց:

— Ան չէ մը դուն ախնցի ես, անանկ չէ՞, հարցուցին:

— Հրաման էք:

Եագմանին Մովսիկն էր, Պէյլերեանին իրկած մարդը. միւս առտուն գտաւ Քերեմենց խաչիկ պատուելին. եագման քակեց, փաթթած թուղթիւրը տուաւ ու մէկտեղ զացին:

Հոկտեմբեր 14ին ալ Վահան Պէյլերեան Արմուտան կը հասնէր: Առտուն կանուխ երկու զիւղերուն հայ ժողովուրդը ոտքի վրայ էր. երիտասարդները ընդառաջ զացին, ծերերն ու տղաքը ճամբան խոնրած կը սպասէին. ժամը 5 1 Չին կապուտ-Լուսէն հրացանի պայթիւնները լսուեցան, մէկը միւսին ետեւէն, անվերջանալի: Ժողովրդական մարդը իր զեղը մտաւ:

Արմուտանի հարուստ ընտանիքի մը կը պատկանէր Վահան. իր մեծ հայրը, հայրը, հօրեղբայրները, եղբայրը, ամենքն ալ ժողովրդին ատելի եղած էին: Վահան բացառութիւնն էր, հեռուէն հեռու ազնիւ արիւնի մը ծանազութեան խորհրդաւոր օրէնքին զաւակը: «Այս երիտասարդը իրեն համար չէ ծնած այլ ազգին համար» կ'ըսէին բոլոր Արմուտանցիները: Պոլիս հանրային օգտին նուիրած էր իր զրամը, գործի համար հօրը իրեն տուած զրամը:

Վահանի Արմուտան վալուստը կազմակերպութեան

մեծ զարկ տուաւ: Ինք կը հոգար անկարող ընկերներու պէտքերը որպէս զի անոնք գործին աշխատին: Կ'օգնէր իրեն ամէն զիմովին, կը բաւէր որ ուխտեալներէն ըլլար: Պէյլերեան կ'ոգեւորէր ամենքը. ժողովներու գումարումները ստէպ ստէպ տեղի կ'ունենային: Թէեւ ինքն ալ փափաքող էր գործին հետ իբր կապ ունեցող չճանչցուիլ, բայց գաղտնապահութիւնը անկարելի եղաւ:

Վահան օր մը մեծ հացիկերոյթ տուաւ մօտակայ դեպի վրայ, Ինի Մաղարա ըսուած տեղը. հրաւիրուած էին թէ՛ Արմուտաններու եւ թէ՛ շրջակայ գեղերու բոլոր ուխտեալ ընկերները. ամենքն ալ անհուն ուրախութեամբ ոգեւորուած: Վերջին ուրախութիւնը եղաւ: Ո՛վ այդ պահուն կրնար երեւակայել թէ ժամանակ մը վերջը այդ միեւնոյն Պէյլերեանը այդ միեւնոյն քարայրին մէջ անօթի ու ծարաւ պիտի մնար:

\* \* \*

Աւանդական սովորութեամբ, Օվաճըսի Քիւրտերը ամէն տարի գարնան Եփրատ գետէն ասդին անցնելով կուգային արշաւներ գողնալ: Արմուտանի նորակազմ վարչութիւնը իր հրամանին տակ ունենալով հրոսակային խումբ մը իբր օստիկան զինուոր, եւ բոլոր ուխտեալները իբր կամուր զօրք, որոշեց վերջ գնել այդ յախշտակութեանց: Երբ այս տարի ալ իմացաւ Քիւրտերուն անցքը, Պէյլերեան զինուած 150 երիտասարդի զուլսը անցած արշաւեց զէպի Քիւրտերը որոնք ի լուր այս յարձակումին աճապարեցին փախչիլ: Մակայն հայ շոկատը վրայ հասնելով անոնց մէկ մասը պաշարեց լեռան մը մէջ: Թիւրք իշխանութեան ալ լուր տրուեցաւ: Յիսնապետ մը հեծեալներ առած հասաւ, բայց շուգելով վտանգուիլ՝ պաշարումը քակել տուաւ եւ Քիւրտերուն փախուստը զիւրացուց:

Ի տես կանոնաւորապէս զինուած այդ երիտասարդներուն թիւրք օստիկան-զինուորները պաշած մնացին: Յիսնապետը ըսաւ. «Իրա՛ւ ալ մեր կառավարութեան փառք ու պարծանք է այս տեսակ ժողովուրդ ունենալը: Ու ալ ձեզի համար ի՛նչ կարեւորութիւն ունին 5-10 Քիւրտերը, դուք այսքան շատ էք:» Գոհունակութեան այս արտայայտութիւնը կեղծ էր: Թիւրք իշխանութիւնը տարի մը առաջ ուզած էր Հայոց զէնքերուն թուահամարը ընել. հրամայուեցաւ թէզքերէի մը մէջ իւրաքանչիւր անհատի զէնքերը նշանակել տեսակովը մէկտեղ, ու մէկ-մէկ ալ երաշխաւոր ներկայացնել. Հայերը իրենց զէնքերը կիսուակէս միայն արձանագրել տուին. հիմա յիսնապետը իր կեղծ գոհունակութեանը հետ մէկտեղ զարմանք կը յայտնէր զէնքերու շատութեանը համար:

Այս արշաւանքին վրայ Արմուտանի կազմակերպութիւնը աւելի զիտակեց գառնալով իր ումին՝ մտաբերեց իր իշխանութեան սահմանները ընդարձակել: Արդէն իրեն հետ կապուած ունէր մօտակայ քանի մը գեղեր. հետաժուտ եղաւ աւելի հեռաւոր գեղերու միութեան, մինչեւ Այլը ուր կ'աշխատէր «Եագմանի» Մովսիկը:

Ձևը գտնելու խնդիրը շատ մտահոգութիւն կը պատ-  
ճառէր. Պէլլերեան վառօղ ու կապար հայթայթելու մի-  
ջոցները դիւրացուցած էր. բայց զէնք ճարելու համար  
շատ պատարութիւններ կը ներկայանային. ու ժողովուրդը  
զէնք կը պահանջէր: Ձևքի հայթայթումի դիւրութեան  
համար, վարչութեան սրտումով նուէր պահանջող զաղա-  
նի նամակներ խրկուեցան զանազան անձերու. այս հրա-  
ւերին քիչերը պատասխանեցին գործնականապէս:

Այդ միջոցին Պէլլերեան եւ խաչատուր պատուելին  
որոնք վարչութեան վրայ վերին հսկողի պաշտօն ունէին,  
որոշեցին Քիչիչեան Նշան պատուելին Պոլիս խրկել, այն-  
տեղ գտնուող հայրենակիցներն ալ կազմակերպելու և Ար-  
մուտանի հետ միացնելու նպատակաւ: Երգերու ոգեւորու-  
թեամբ պատուելին ճամբայ դրուեցաւ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՍԱՐՏԻԿ ԱՂԱ



Ա. Մ Ա. Ս

Երեկոյթը իր փայլին մէջն էր, թէև զեռ կարեւոր  
հրատիրականներու կը սպասուէր: Զանազան խումբեր կազ-  
մուած էին, ինքնաբերաբար. կիները, ազնիւները մէկ  
կողմ, երիտասարդները անոնց մօտիկ. լսողները, չափա-  
հասները, գործի մարդերը մէկիկի բաշտուած: Ամենքն ալ  
կը խօսէին բարձրաձայն, խումբերը յաճախ կը խորհրդ-  
գակեցնէին, խօսքեր, բրբիջներ, կատակներ կը նետէին ի-  
րարու: Բայց այդ զանազան խումբերուն կենդանի կապը,  
միացման դիմը, օրիորդ Պէլլերեանն էր, գրեթէ միշտ  
տարի վրայ, յարաշարժ, աշխոյժ, շաղփաղի, հիւրերուն  
մէջ սպորտը, գործող, վազվառու, ամէնուն հետ համար-  
ձակ, ամէնուն հետ միեւնոյն ազատութեամբ խօսող,  
ժպտող, խնդացող, յեղակարծ անհետացումներով ու գա-  
հավթ մուտքերով: Շատ բաներ կ'ըսէին այդ տարօրինակ  
արարածին համար, որուն մանտանդ կը մեղաբլին  
իր սկարութիւնը երիտասարդներուն համար, թէև իրաւ  
և թէ երիտասարդներուն հետ այնպէս կը վարուէր ինչպէս  
իր ընկերութիւններուն հետ: Խանգարուած զսպանակէ մը  
շարժող տեսակ մը մեքենայ կարծես, կաշաղաղի պէս  
շանչան, ձուկի պէս անհանդարտ, անպարտ խօսող,  
մարդն անցածը անխորհրդաբար դուրս թափող, բան մը  
պահելու, ծածկելու անկարող, գաղափարէ գաղափար,  
խօսքէ խօսք ցաաքրաբերով ինչպէս ճնճողակ մը թառէ թառ,  
մշտահոտ ալիքի մը մէջ անկապակից, անհեթեթ, իրարու  
հետ շկարուած խօսքերու, ծայրայեղ, խօլ շարժումներու,  
լիակտիւրդ անպատկառ բրբիջներու, յեղակարծ անշար-  
ժաօթի կայքերով — շունչ աննկու համար կարծես —  
նորէն սկսելու, նետուելու, թռելու համար բառերու,

շարժումներու բուն յարձանքի մը մէջ, որ կը պատարի,  
կը դառնայ՝ թղթի, կտաի, փետուրի կտորներու փոշե-  
խառն թոխքի մը պէս՝ փոսրցին մէջ հովն խօլաբար պա-  
րող, շիտթ ու տակնուլրայ:

Յարախաղ գէմը մը սրուն աշխոյժ, զուարթ կենսա-  
կանութիւնը ոչ մէկ խորունկ զգացում՝ կուզայ երբեք իր  
երազանքով կեցնել, ոչ մէկ մտածում՝ իր պաղած լրջու-  
թիւնով:

—Օ՛, պարոն Սուրեան, աս ո՛ր էք, աս ո՛րչափ ու-  
շացաք... Ըսինք որ ա՛լ չի գար...

Սուրեանն է, Սուրեանն է, շշուէր պարաբեցաւ:

Ամէն զուկները վարձան:

—Սուրեանը ո՛վ է... Ի՛նչ անուն է աս...

—Իշաէ, սուր... այսինքն «խըլըճ»... Պոլիս Գրըլըճ-  
ճեան էր աէ Սուրեան բրա... հասկցուց չգիտցողներուն  
օրիորդ Պէլլերեան, ու աշխոյժ վարձով մը նորեկին  
ընդառաջ վազեց:

Սեւ հագուած շիք երիտասարդ մը ներս մտաւ, զլիսա-  
գիրի մը պէս հանդիսաւոր ու ուղիղ:

Տանտիրուհին, իր վերապահումն անջատուելով, շեշ-  
տուած յարգանքի ու համակրութեան նշաններով դիմա-  
ւորեց նորեկը:

—Աս սրչափ ուշ մնացիք, Պ. Սուրեան:

—Կամքն անկախ պատճառաւ մը ուշացայ, աիկին.  
տեսեք պատմեմ ի՛նչ պատահեցաւ:

Լեւոն Սուրեան շատ մը յատկութիւններու կը պար-  
տի այն շոգոքորթ ընդունելութիւնը, համակրական հետա-  
բըրբութեան շարժումը որ սրահին մէջ դիմաւորեց իր  
զալուսաւ: Էն փայլուն ներկայացուցիչներէն է իր սերուն-  
դին, «ուսումնական», և սալօնի աղայ միանգամայն:

Սուրեան տիպարը կրնայ համարուիլ զարգացումով  
բիշ շատ ապիկուած այն երիտասարդներուն, մաքի աշ-  
խուսութեամբ ու խօսելու դիւրութեամբ մը օժտուած՝ զոր  
փայլելու, ուշագրութիւն գրուելու տենչ մը կ'երկրորդէ,  
որոնք ամէն տեղ ազատ մուտք ունին, սալօններու, հա-  
ւաքումներու, երեկոյթներու մէջ կը զահակալին, ուր մի-  
այն կրնան, կ'ուզեն խօսիլ, ուր գրեթէ միշտ կը հասնին  
սրամիտ խօսքերու, պատմելիքներու նախապատրաստուած  
պաշարով մը: Ունկնդիրները կը դրազեցնեն իրենցմով,  
իրենց զրացումներով, գաղափարներով, իրենց կեանքին  
դէպքերուն, իրենց պատահած էն չնչին բաներուն պատ-  
մութիւնովը՝ որոնց շատ կարեւոր պատահարներու հա-  
մեմատութիւնները կուտան: Ամէն տեղ, կը կրկնեն մի-  
եւնոյն բաները, սրամտութիւն կամ պատմութիւն, անոնք  
որ ամէնէն աւելի յաջողութիւն պատճ են: Գրեթէ ամէն  
բանի վրայ որոշ գաղափարներ ունին, ամէն հարցումի,  
զիտադութեան անմիջական կտրուկ պատասխան մը՝ պատ-  
րաստ՝ իրենց մակերեւութային մտքին մէջ, միջոցը դի-  
տեն ամէն բանի վրայ խօսելու առանց բան մը բռնելու, և  
հանդիսաւորութեն, նորահնար, անձնական խօսքերու պէս  
կը կրկնեն զրբերու մէջ գոց սորվուած պատրաստ խօր-

հրդածութիւններ, հինաւորաց ճշմարտութիւններ, հասարակ-տեղիքներ: Ատոնք, ամէն բանէ աւելի նախանձախնդիր ընդհանուր ուշադրութիւնը իրենց խօսքերուն լծելու, բնաւ չեն հանդուրժեր ո եւ է մրցակցութիւն, որքան որ ալ տկար ըլլայ ան, շատ դժգոհ՝ երբ կ'ընդմիջեն գիւրենք կամ կը փորձեն ունկնդիրներ խել իրենցմէ, շատ մտացիր կերպով մտիկ կ'ընեն իրենց ուղղուած խօսքերը՝ որոնց չեն պատասխաներ իսկ եթէ շահ մը չտեսնեն, առիթ մը չգտնան հոյ փայլելու, բոլորովին զբաղած խօսելու, միշտ, միայն իրենք, իրենց բաշխու աչքերն ու տկանջները — մանաւանդ իզական սեռին —, յաճախ, անախորժ ընդմիջողէ մը, լուրջ՝ իրաւացի պիտոյութիւն մը, ակնարկութիւն մը ընողէ մը վրէժ լուծելով խայթող սրամտութիւնով մը, որ պատասխան մը չէ իրենց ուղղուած խօսքին, ե զտր կ'ըսեն դառնալով ոչ բեզի՝ որ զայն գրդոցիր, այլ միաներուն, զոր կը խնդացնեն ի վնաս եւ ամօթ բեզի:

Աս պատկերը գրեթէ ճիշդ էր Սուրբանի համար որ կրնար բանի մը կէտեր ջնջել անկէ, եւ անձնական յատկութիւններ աւելցնել անոր, ինչպէս իր խելացի ու խորամանկ ըլլալը, այդքան տխրամտութիւնները բիշ մը փրկող: Բայց խելացիին տխրամտութիւնը կը սկսի այն վայրկենէն երբ կ'ուզէ խելացի երեւնալ, փայլիլ: Յեղափոխական եղած ըլլալու առաւելութիւնն ալ ունէր Սուրբան, առաւելութիւն որուն կը պարտէր իր երեքամսեայ նշանաւոր բանտարկութիւնը, Ալեքսանդրիոյ ամէն ընտանիքներէն ճանչցուած տեղն ի տեղօք, գլխաւոր առանցքը գրեթէ իր խօսակցութեան, զբամապուրը, մայր նիւթը, անսպառ անվերջ, ամէն տեղ բանի մը անդամներ կրկնուած, յեղյեղուած, ծամծմուած, միշտ յաւելումներով, փոփոխութիւններով, ու հակասութիւններով ալ: Իր Յեղափոխականութիւնը բացատրուի թերեւս սա բանով թէ ինք յեղափոխուհիներու հետ յարաբերութեան մէջ մանելու սահմանուած է եղեր Պոլսոյ Դաշնակցական Կօմիտէին կողմէն, որուն շնորհակալացուցիչն է, կ'ըսէին, Ալեքսանդրիոյ մէջ:

Աւելի երկայն բան միջակ հասակով, նուրբ, բայց առնակազմ երիտասարդ մըն էր Սուրբան, եռանկիւնաձեւ երկար գէւքով, նոխազի մօրուքով վերջաւորուած. պղտիկ բարակ քիթ մը, որուն բովերէն նրբոյր պիտեր կը գծուէին, ծայրերը թեթեւակի վեր դարձուած, աշխոյժ սեւ աչքեր ակնոցին ետեւէն պճլտացող, մեծ խնամքով սանտրուած, երկճղուած փայլուն մազեր: Ամբողջութեամբ՝ համակերչի սիրուն երես մը, կանոնաւոր զիմագծութեամբ, վարդագոյն ու մաքուր, սեղմիրանի սիրտերը բարախեցնելու ընդունակ:

Անթերի հագուածք մը, պչրոդ աղջկան զգեստադարակի մը պէս կոկիկ, կանոնաւոր, շտկուած: Լայն լանջաշապկի մը ճերմակ գատարկը կուրծքին վրայ շաշող, ըզգեստին սեւ հանդիսաւորութեանը մէջտեղ:

Նստելուն պէս Սուրբան սկսաւ խօսիլ: Կը խօսէր ինչպէս հագուած էր: Խօսուածքը իր հագուածքին հան-

դիսաւոր, պաշտօնական կիրականագրաստուած ունէր, յաւակնոտ: Անթերի կերպով կանոնաւոր խօսուածք մը բերականական, լաւ կոճկուած, արդուուած նախադասութիւններով, կիրականափայլ յղուած բացատրութիւններով, բառերով, անփոշի, խողանակուած, առանց ս եւ է արատի, ճմրթկումի ու տեղ տեղ ֆրանսերէնով անուշահոտուած, ֆրանսերէնը անհրաժեշտ մասը կազմելով մեր «գարդացած» ներուն խօսակցութեան:

— Իսկապէս, տիկին Պէյլերեան, սկսաւ մտիկ ըլլուելու վարժուած մէկու մը բարձրաձայն, հեղինակաւոր շեշտովը — Սուրբան յօժարաւ իր նախադասութիւնները կը սկսէր կամ կ'ընդելուզէր զանազան մակաբոյժ բառերով, բացատրութիւններով օրինակի համար, ապահովաբար, կը հաւատստեմ ձեզ, հաւատացէք որ... — Իբրեւ թէ խօսքը տանտիրուհիին ուղղելով, մինչ իրօք բոլոր հիւրերուն համար կը խօսէր, որոնք արդէն իր գալէն ի վեր խօսակցութիւնները զարդեցուցած իրմով կը զբաղէին, բացի մէկ բանի հոգիէ, ինչպէս Չիլինկիրեանը որ Հնչակեան ըլլալուն զինքը արհամարհել կը ձեւացնէր եւ սրուն Սեդրոսեան, յաղթական հակառակորդի մը պալէն նեղացած, կը պատմէր պայմանագրին յափտենական պատմութիւնը, յուզուած, բաց նամակ մը երեքցնելով ձեռքին մէջ:

— Ինչ խայտառակութիւն է ըրածնին, բողոքեմ պիտի... —

Եւ խապառածեանը որ Սուրբանը գէլգէկ, զեչպպէ կ'անուանէր, եւ որ գաւառացիին հետ զրամի վիճաբանութեան մը բռնուած էր.

— Պապա՛մ... 20 ֆրանքը 80 դրուշ ողջ չընէր, խաբեր են բեզի, անգլիական ոսկին 25 ֆրանք 25 սանթրիմ է... հաշիւը ընեմ տէ նայէ... 30 փարայի չափ խաբուեր ես, ուշադրութիւն ընելու է հոս, հա՛, կը խաբեն... —

— Իսկապէս, տիկին Պէյլերեան, կը հաւատստեմ ձեզ թէ այս գիշեր ուշանալուս պատճառը, հակառակ կանուխ գալու խօսատուիս զոր տուի անցեալ գիշեր, — հոս՝ ձայնին մէջ շեշտ մը որ ստորակէտի մը կամ բուրթի մը կը նմանէր — կամքէս բոլորովին անկախ պարագաներու պէտք է վերագրել:

Ու սկսաւ մանրագէպ մը պատմել, ունկնդրութեան ծիծաղներով ընդմիջուած: Աւանակով Նեղոս զացեր էին պոռառիքատի մը համար... հոն, անգլիացի զինուոր մը, կ'ըր ու տափակ գլխարկը գլուխը դրուած, « ինչպէս կափարիչ մը քիշիի մը վրայ»... —

Աս նմանութիւնը քրքիչ մը առթեց, որուն չմասնակցեցան բանի մը հոգիներ որոնք արդէն առիթը ունեցած էին խնդալու առկէ, եւ մէյ մըն ալ ինք, իր սովորութիւնը ըլլալով խնդացնել առանց արեւելու իր ակադեմիական զրաբար լրջութիւնը:

— Կ'երեւայ թէ գինով էր... ճիշդ աւանակին ետեւը նստած էր... ինչ որ ինձի նմանցնել տուաւ զինքը ու աւանակը « զրտի » շողենաւի մը սրուն ծիծեկոյզը ետեւէն եղած ըլլար... —

Ահազին քրքիջ մը ողջունեց այս երկրորդ նմանութիւնը, կ'երեւայ թէ անտիպ:

— Իրաւ անանկ է... ճիպ ճիշդ... աս ինչ թօհաֆ տղայ է...

Շատ լուրջ, կարծես օտար այս խնդուքին, իր ներքին գոհունակութիւնը մասնող աչքի աննշմարելի բթթումով մը միայն, Սուրեան կը շարունակէր պատմութիւնը, թիկնաթողին վրայ լայնօրէն տարածուած, իրանը ետեւ, ու մերթ մասնորոշը պիտեբուն ծայրերը ոլորելով: Ամենափոքր մանրամասնութիւնները կ'ընդլայնէր, եւ չնչին, աննշան կէտերուն վրայ հաճոյակատարօրէն կը ծանրանար, ջանալով բառերու առատութեամբ նիւթին կծծիութիւնը դարմանել, ամլութիւնը սքօղել, խօսքի յուսահատեցնող դանդաղութեամբ մը որ անհամբերութենէն կ'եռացնէր օրիորդ Զարուհին, հետաքրքիր, աչքերը խոշոր բացած, «է վերջը, է վերջը» ներով մտրակելով Սուրեանը որ առանց հոյ ընելու, իր կրիայի գնացքը կ'երթար, կը ծամ ծմէր, իր նախագասութիւնները կը կոկէր, կը խնամէր, մակրայնորով, շողկապնորով, սեռի խնդիրներով, քերականական ամէն երկրորդականներով կը խճողէր, կ'երկարէր, կրքեմն ալ կանգ առնելով, ծխելու կամ փնտռելու համար: Կէս ծամ պատմեց չնչին դէպք մը զոր քանի մը բառով կարելի էր ամփոփել: Բայց որչա՛փ խնկացուց ընկերութիւնը յաճախ թերեւս ինք ալ դարմանալով թէ ինչո՛ւ կը խնդան: Երբեմն Մարկոսեան, նախանձէն անշուշտ, կը ջանար կտոր մը ուշադրութիւն փրցնել. կ'ընդմիջէր, կը փորձէր սրամիտ խօսք մը օպրդեցնել. ոչ ոք սակայն կը զբաղէր իր սրատուութիւններով որոնք կը բռնկէին թըրջուած լուցիկներու պէս. այդ ոտնձգութեան հանդէպ, Սուրեան շրթունքի արհամարհոտ եւ զգոհ միանգամայն կծկում մը ունէր:

— Այո, պարոն, վար ինկայ, պատասխանեց անգամ մը Մարկոսեանին որ կատակ մը յանդգնած էր Սուրեանին՝ բաղիւման պատճառով աւանակէն վար իյնալուն վերայ. բայց ապահովաբար՝ չեմ՝ մաղթեր որ զուք իմ տեղս եղած ըլլայիք ձեր մարմինսով...

Խոշոր ծիծաղ մը փրթաւ այս հեղնութեան, որ Մարկոսեանը պապանձեցուց, պայթած օդապարիկի մը պէս սմբեցուց, մինչ Սուրեան, հակառակօրէր կիցի հարուածով մը տապալելէն զոհ, յաղթական կը շարունակէր: Պատմութեան վերջին՝ լուսութիւն մը տարածուեցաւ սենեակին մէջ — միջնարարի պէս բանմը — զոր կը խանդարէր միայն թաւ ձայնը խապառածեանին՝ Գալաֆեանին հետ խօսող:

— Սուլթան Համիաը ինչ յանցանք ունի, յանցանքը մերինն է...

Սուրեան ոտքի ելաւ, ու մէկ ձեռքը տարատին զըրպանը՝ միւս ձեռքով գլանիկին մտիկըր անտարբերօրէն թթթուելով պնակի մը մէջ, առանց նայելու իր ունկնդիրներուն, շատ հանդարտ շեշտովը մէկուն որ պարզ բան մը կ'ըսէ կամ արտակարգ յայտնութիւն մը սրուն յառաջ բերելիք ահազին սուլաւորութեանը վրայ վստահ է,

— Գիտէ՞ք, ըսաւ, սուլթան Համիաը իսկապէս մեծ մարդ է...

Պաղ լուսութիւն մը — ապշուած մէկուն որ յանկարծ մութին մէջ կը մտրճուի ուր կը փորձէ տեսնել աչքերը խոշոր բանալով — պատասխանը եղաւ այս յայտարարութեան որ ունկնդիրներուն հասկցողութենէն վեր կը մնար, օդին մէջ առկախ:

— Ինչ կ'ըսէք, պարոն Լեւան, ըսաւ Զարուհի աչքերը դարմանքէն բացած, սուլթան Համիաը...

— Անշուշտ, ընդմիջեց Սուրեան, գիտեմ որ այս ըսածս ձեզի քիչ մը տարօրինակ պիտի թուի... բայց արդէն ինծի արտառոց, բառաաօքոյալ մէկն է կ'ըսեն... իսկապէս սուլթան Համիաը մեծ մարդ է... այսինքն...

Ու սկսաւ բացատրել: Սուրեան մենամուտութիւնը ունէր, երբեմն, իր ուսմիկ ունկնդիրները ապշեցնել, զայթակղեցնել ուզելու անոնց խելքին տարօրինակ երեւոյղ կարծիքներով, սովորաբար — եթէ չըլլային երկար բարակ փնտռուած, խորհուած ապշաբանութիւններ — դարմանքի զիւրիս ազատախոհութեան ծամծամուած, ծրթոած հասարակ-տեղիքները, զոր երեւնալ ուղղոյնը կապկօրէն կը շալակեն ու քիչ շատ քաղքենի միջալայրերու մէջ սնտափառօրէն կը պարզեն՝ տարօրինակութեան աղբաւր մը մը, չես դիտեր ինչ դարձմանակի մը պէս: Ատիկա ալ քիչ չէր նպաստեր Սուրեանին հմայքը աւելցնելու Ալեքսանդրիոյ հայ ընկերութեան աչքին:

— Աս խօսքս, շարունակեց Սուրեան՝ ծուխի շնչառք մը արձակելով դանդաղօրէն, զարմանալի պիտի թուի մանաւանդ իմ բերնիս մէջ որ յեղափոխական մըն եմ կամ եղած եմ, եւ որ սուլթան Համիաըն կը պարտիմ իմ երեքամսեայ բանտարկութիւնս:

Հետաքրքիր մրմունջներ բարձրացան:

— Ի՛նչ, երեք ամիս բանտ պառկած է:

— Հապա՛, ըսաւ Զարուհի, երեք ամիս, տեսնաք ինչե՛ր եկած են զլիւն բանտին մէջ: Ինք պատմէ տէ մտիկ ընէք...

— Իրա՛ւ, բանտ պառկած էք, պարոն Սուրեան, հարցուց օրիորդ Սեւէրեան աշխոյժ շեշտով մը...

— Այո՛, ըսաւ Սուրեան, լուրջ ու ծանր:

Հարցումներ կը տեղային ամէն կողմէ: Նոյն իսկ խնդրեցին իրմէ պատմել: Քանի մը վայրկեան նազ ընելէ ետքը, Սուրեան հաւանեցաւ:

— Տեսէ՞ք ինչպէս եղաւ, պատմեմ: Ու սկսաւ, ո՛վ գիտէ քանիբարդ անգամ ըլլալով, պատմել իր բանտարկութիւնը, օրագիրի մը բծախնդրութեամբը, մանրամասնումովը:

— Բարեւ ձեզ, աղաներ...

Խոպոտ ձայն մը եկաւ սրահին դռնէն, ուր ակնարկները ուղղուեցան:

Կարմիր զիշերազգեստով, խոշոր, ուռած մարդ մը, այրած երեսով, կունտ ճակատով, Պիլժմարեան բերտ զիմապծութեամբ, ներս մտաւ: Հիւրերէն սմանք զարմացած՝ ու

րիշներ խնդո՞քի ձեւեր առին, մինչ թեթեւ կարմրութիւն մը շողի մը պէս կը բարձրանար տիկին եւ օրիորդ Պէյ-լէրեանին այտերուն վրայ: Մէկէն խօսակցութիւնները դարձան, աղմուկը լռեց՝ այդ անակնկալ երեւումին ապշութեանը մէջ:

— Հրամայե՛ք, Ստեփան աղա, հրամայե՛ք, ըսաւ խապառածեան տածկերէն:

— Չէ՛, ես սան՛ի աղէկ եմ, ըսաւ ախինջ ամուսինը, որ գետինը դորդին վրայ փռուելով, կանակը թիկնաթոսի մը կըթնցուց, ու երեսը խապառածեանին վարձուց — «Էնէ՛ վար նէ եօզ պազալըմ» ով մը:

— Աղջիկ, սա լուցիկն հոս տուր, հրամայեց, դիշուրազընտին խոշոր, պարկանման գրպանէն ծխախոտի տուփ մը հանելով:

— Ճանրմ, Ստեփան աղա, ինչո՞ւ աթոռին վրայ չես նստիր, թօհաֆ բաներ կ'ընես, յանդիմանեց նուրբ ձայնը տիկին Պէյլէրեանին, գէմըր ամօթէն կարմրած:

— Կնիկ, դուն քու գործդ նայէ՛:

Շատ ճարարօրէն, Սուրեան, արդէն իր ունկնդիրներուն շեղած ուշադրութիւնը վերաշահելու փափաքող, պատմութիւնը շարունակել սկսաւ, մոռացում բերելու համար կարծես այդ զաւեշտական երեւումին վրայ, այնքան անհամաձայն սենեակին ու հիւրասուրբին սեթեւեթակալ պաշտօնականութեանը հետ: Ստեփան աղա, բարի ու սղջամիտ մարդ մը, անկեղծ, քիչ մը բիրտ, ու յօժարաւ բֆրող, որ Սուրեանը չէր սիրեր, խապառածեանին հետ գործի վրայ խօսակցութեան մը բռնուեցաւ իր մողսվըրդական հում բացատրութիւններու իրապաշտ ցցունքովը մարմնացած, կէս շինական, կէս պարսկական զգեստի մը պէս գունածեփուած, կոշտօրէն պատկերուած խօսուածքովը, մինչ իր խոպտա ձայնին ու Սուրեանին ողորկ ու բարակ շեշտերուն մէջտեղէն կը բղբար օրիորդ Սարաֆեանին ազազուն զլխաձայնը:

— Հոո, Տօքթոր Լանկրատոյին գացի... երկու ամիս նայեցաւ, բայց օգուտ մը չըրաւ:

Քրքիշներ, բացազանչութիւններ, զուարթութեան թոխներ կ'ընդմիջէին, կը կէտկէտէին Սուրեանին պատմութիւնը: Արդէն դիտելի է որ քաղքենի երկսեռ հաւաքումներու յատկանշանական է կատակաբանութիւնը, ծիծաղը, մեծ, մայր խաղը զոր միանուագ համարձազանդ կ'երզեն ամէն գէմքերը, ամէն բերանները, որ իր բնահաճ ստոստուն ալիքներուն մէջ կ'ընդխառնէ, կը ներգաշնակէ դէմքերուն, ձայներուն, ձեւերուն բոլոր հակասութիւնները, այլասեռութիւնները, — զուարթութեամբ մը որ ժպիտ մը կը գնէ արդէն ամէն գէմքերուն վրայ իր բն նախապատրաստութիւն մը ծիծաղին — որ հրթիռներու փունջի մը պէս կը վառի, կը բռնկի, անձէ անձ, խումբէ խումբ կը վազվզէ, կը ցատքբա՛ւ, ո՛ր եւ է առիթով մը, յաճախ առանց պատճառի, անցնող շունչի մը, քթթող ակնարկի մը, իրարու վերադարձուած անշնան խօսքի մը, կատակի մը պատեհութեամբը, արդէն ծիծաղով մը արատասնուած երիտասարդէ մը որ կ'ուզէ հաճելի ըլլալ,

խնդալով ընդունուած աղջիկէ մը որ կ'ուզէ պչրել, ամենքն ալ, այր թէ կին, աղջիկ թէ երիտասարդ, տրամապիտ' պատրաստ խնդալու, դիտակից դեղեցկացնող յատկութեանը ծիծաղին, ձայնաշարը այդ հաւաքումներուն, թաւալող, ոտոտտուն, կհաճատե լուսթիւններէ վերջ ալ աւելի ուժով բռնկող, եւ ուր էրիկմարդոց թաւ ու թուխ բամբը կանացի հնչունութիւններու վճիտ ու ցնծուն թիծծիքարօներովը կը կայծկլտայ:

Ինչպէս ալ իրարունկատմամբ բարեացակամ, սիրուն կը թուին. ինչ մուրեր պիտի քսեն սակայն իրարու երբ իրարմէ բաժնուին, ու երեկոյթին քաղը սկսին տունը, հայելիներու զիմացը հանուելով միանգամայն:

Յանկարծ դուռը զարնուեցաւ: Չարուհի վազեց:

— Աս ատեն ո՞վ է կուզայ կոր, զարմացաւ ասնախրուհին:

Մէյ մըն ալ Մարտիկ աղան ներս մտաւ, յաղթական, քովը ունենալով Չարուհին, որ կը փութկոտար, կը ճառագայթէր:

Իրարանցում մը, աթոռներու շարժում մը:

— Մարտիկ էֆէնաի Սրմաքէշեան, մենձ վաճառական, շատ հարուստ, փափոց օրիորդ Պէյլէրեան ականջներ ի վար... հօրս բարեկամներէն է:

Ստեփան աղան, բան մը որ իրեն ստէպ չէր պատահեր, ստքի ելաւ, հրամցուց:

Տանտիրուհին, առաւել քան երբեք հպարտ, օրիորդը թռչտուն, ներկայացումները կատարեցին:

Խորխոտ ու բարձր, Մարտիկ աղա զլիւս թեթեւ շարժումով մը կը բարեւեր:

— Ինչո՞ւ չէք նստիր, նստեցէ՛ք, ըսաւ շեշտով մը որ յանդիմանանք մըն էր կարծես ստքի շեղլողներուն հասցէին:

— Օրիորդը ինչո՞ւ հետ չբերիք Մարտիկ էֆէնաի, շատ ուրախ պիտի ըլլայինք...

— Այո՛, ես ալ կը փափաքէի կոր, քիչ մը տկար ըլլալուն չուզեց գալ:

— Է՛, աւելցուց, տեսնելով որ ամենքը լուռ էին, ինչի վրայ կը խօսէիք կոր, շարունակեցէ՛ք...

Գիտնականութեան ժպիտ մը ծագեցաւ Սուրեանին դէմքին վրայ, որ, իր պատմութիւնը ալ վերջնականապէս ընդմիջուած կարծելով, զժգոհ ուշադրութեամբ մը կը դիտէր Մարտիկ աղան:

— Ոչինչ, ըսաւ Չարուհի... բան... միտիւ Լեւոնը իր բանտարկութեան պատմութիւնը կ'ընէր կոր տէ...

— Բանտարկութիւն... յեղափոխական է պարոնը...

— Էր երբեմն, պատասխանեց Սուրեան...

— Հը՛, ըրաւ Մարտիկ աղա յօնքերը պոստելով ու խոժոռ մը Սուրեանը չափչիւղով... է պատմէ նայինք, միտիւ:

Փակադիծի մէջ ըսինք որ Մարտիկ աղա մէկ հոգիի «յողնակի» խօսելու սովորութիւնը չունէր, բան մը զոր չէր հասկցած. — «դուք»ը երկու կամ երեք հոգիի կ'ըսուի,

ա՛ պապամո կը դաստիսուէր Պոլիս, թէն փափաքող էր որ իրեն դուք, ձեզ, ձեր ըսուի, անշուշտ ինքզինքին քանի մը հոգիի արժէքը վերագրելով:

— Պատմենք, ըսաւ քովի ծաղիկ մը Սուրեան, ու երբորդ անգամ ըլլալով ձեռք առաւ ընդհատուած թելը: Իրիկուն մը բանտին պահապանը եկաւ ինծի ծանուցանել որ Հիւսնին զիս կ'ուզէ հարցաքննութեան համար...

— Աւ կ'ըսեն թէ, աւելցուց Սուրեան իբր եզրակացութիւն իր վերջապէս աւարտած պատմութեան, յիշափոխականները բան մը քաշած չեն, ու եւ է տառապանք կրած չեն, թէ ժողովուրդն է որ միայն տուժած է...

Աւելի ազէկ կ'ըլլար որ չըսեր այդ խօսքը Մարտիկ աղային ներկայութեանը: Մարտիկ աղա որ Սուրեանը մտիկ ըրած ատեն մեծ ճիգեր կ'ընէր ինքզինքը զսպելու համար, եւ որ բաւական ատենէ ի վեր առիթ ունեցած չէր իր հակայեղափոխական զայրոյթին սլացքները թափելու հրապարակաւ, այդ խօսքին տարօրինակ ուժիւթութեամբ մը պայթեցաւ, ի մեծ ապշութիւն հոն գտնուող ներուն:

— Յեղափոխականները նեղութիւն կրած են, իրա՛ւ... է՛ ժողովուրդը, անոր քաշած տառապանքները... ժողովուրդը ի՛նչ յանցանք ունէր... յեղափոխականները չեն որ զինքը այս ահռելի վիճակին հասցուցին... դուք չէ՛ք որ զինքը ջարդել, կողոպտել տուիք, զինքը աշխարհիս շարս կողմերը պանդուխտ ձգեցիք... յեղափոխականները ի՛նչ քաշեցին որ... ազգին ստաղը կերան, քէյֆ ըրին, ու յետոյ զինքը ջարդել, կողոպտել, բանտարհել տուին, ... մանաւանդ ան Դրօշակեանները...

— Իրաւունք ունի Լֆէնտին, վաւերացուց անդիէն Ստեփան աղային կոշտ ձայնը. ինծի եղած փառք ես զիտեմ ատոնց սայիէն:

Մարտիկ աղա կը շարունակէր իր ճար, ուսած շեշտերով, խոշոր շարժումներով, հակառակ հաշտարար ընդմիջումներուն, խափանումի ճարտար փորձերուն տիկին եւ օրիորդ Պէյլէրեանին, որոնք կը վախնային բաղխումէ մը Մարտիկ աղային եւ Սուրեանին միջեւ: Այս վերջինը, սակայն, կը մնար շատ հանգարտ, արժանաւոր՝ նախկին վաճառականին խօսքերուն զայրացկոտ հեղեղին դէմ, աչքերը ուշադրութեամբ անոր յառած, պրկուները սեղմուած, զէմքը կարմրած:

— Մեր յեղափոխականներուն ըրածը հայրենասիրութիւն է, ազգասիրութիւն է կը կարծէք... մեծ մտածութեան բարեբաններ են ատոնք, փառասերներ կամ ժողովուրդը շահագործողներ... հայրենասիրութիւն մի... հայրենասիրութիւնը դուք եկէ՛ք ինծի հարցուցէ՛ք, ինծի:

Հոս կանգ առաւ:

— Ինծի կը տեսնա՞ք կոր, ինծի... այո՛, թէն վրայս բան մը չերեւար, բայց ասիկից քսան տարի առաջ ես մենամարտեցայ ու պալօնով օդը ելայ, գիտէ՛ք ի՛նչ բանի համար...

Մարտիկ աղային ձայնը կը գոռար, կը թաւալէր, սենեակին մէջ կը թնդար ապշած լռութիւնով մտիկ ընող

հիւրերուն գլխուն վերեւ, ու ձեռքը ճարտասանական թըրիչներով օդը կը ձեղքէր:

— Պարզապէս ազգիս փառքին, պարծանքին համար, հայ անունը բարձր բռնելու, ու պատմութեան մէջ երկու տող ունենալու համար:

Օրիորդ Պէյլէրեան, գլխու հետաքրքիր յառաջացումով մը, մէջ նետուեցաւ:

— Մենամարտեցա՞ք... պալօնով օդը ելա՞ք... ի՛նչ կ'ըսէք, իրա՛ւ... պատմեցէք նայի՛նք... կ'աղաչեմ:

— Այսինքն ազ ըսել չէի ուզեր, շտկեց Մարտիկ աղա, սր կը ծիւր, քիչ մը հանգարտած, ինչպէս ամէն սք որ շատ տպաւորիչ բան մը ըսելէ վերջ՝ կը լռէ՝ ունկնդիր ներուն զայն մարսելու ժամանակ տալու համար: Չըրի, իրաւ է թէ, բայց քիչ մնաց որ ընէի — եթէ զէպքը անակ ուզէր... բայց բազում ուրիշ կերպ տնօրինեց...

Հեգնական մպիտ մը նրբադժուեցաւ Սուրեանին դէմ: Բնի վրայ որ կը շարունակէր խորունկ ու թափանցող ուշադրութիւնով մը քննել Պոլսեցի վաճառականը:

— Ի՛նչպէս եղաւ, ի՛նչպէս եղաւ, հարցուց Չարուհի:

— Պատմեմ: 1877ին Լեհաստանի Արմէնոբոլիս քաղաքը կը գտնուէի, սրովհետեւ ես երիտասարդութեանս շատ ճամբորդած եմ, երբ ողորմած հոգի հայրս գեռ ողջ էր: Երկու տարի ամբողջ պտտեցայ Աւստրիա, Գերմանիա, Լեհաստան, Ռուսիա եւայլն: Հա՛, Արմէնոբոլիս քաղաքը կը գտնուէի կոր... հոն պալօ մը կար դիշեր մը, քաղաքին նաճակատան պաշտօնեաներէն՝ իմ բարեկամս՝ Պ. Լեւոն Ստեփանեանցին հետ ելայ գացի: Երբս մտանք, հոն Գերմանացի մը տեսայ որ բարկացած կերպով մը գերմաներէն «անպիտան հայ» կ'ըսէր կոր դրսեցի Հայու մը որ անուշադրութեամբ իր վերարկուն կախուած տեղէն վար ձգեր է եղեր: Աս սրլսցի արինը զլուխ ցտարեց... ես ալ ան ատենը երիտասարդ — կրակոտ ժամանակ — կրակ կտրեցայ, ու շիպ շիտակ վրան երթալով ձեռնոցը ձեռքէս հանցի ու երեսին զարկի, ձեռքս գաւազան չգրտնուելով... ու փառաւորապէս սկիւայ լուալ, ըսի թէ ի՛նչ իրաւունք ունիս դուն անպիտան Հայ ըսելու, Հայ անունը անպատուելու, նախատելու. եթէ հայ անհատի մը դէմ է բարկութիւնդ, ինչո՞ւ հայ ազգը ամբողջ կը նախատես կոր...

Մարտիկ աղային զէմքը կը կարմրէր ու աչքերը կը թաւալէին սպառնալից, կարծես քսան տարի առաջուան նոյն վայրկեանն էր:

— Ըսի ու վերի սրահը ելայ: Ի՛նչ ըրիր, ըսաւ բարեկամս: Ի՛նչ պիտի ընեմ, ըսի, մեր ազգը պաշտպանեցի, եղած նախատիքին վրէժը լուծեցի: — Չեռնոցը ինչո՞ւ երեսին նետեցիր: — Հապա՛, բարկութեանս... — Ատիկա մենամարտի հրաւիրել է: — Մէյ մըն ալ միտքս ինկաւ որ, զէպերուն մէջ չե՛նք մի կարգար, Եւրոպայի մէջ ձեռնոց նետելը մէկու մը երեսին՝ մենամարտի հրաւիրելու նշան է... Քիչ մը դող ելայ, որովհետեւ, ի՛նչ մեղքս պահեմ, զէնք բռնել չէի գիտեր: Անմիջապէս երկու շիշ շամբ բանեա բանալ տուի... որպէս զի վրաս քիչ մը քաջու...

թիւն գայ. բայց որոշած էի մենամարտիլ, այո՛, մեռնի՛լ, հայ անունը պանծացնելու, փառաւորելու համար: Սկսանք խմել: Պարահանդէսին մէջ բարձր գոնուողները զիս կը դիտէին, զիս իրարու կը ցուցնէին մատով, կ'ըսէին որ աս Հայը մենամարտի հրաւիրեց զերմանացի մը: Ասիկա զիս կը սրտուէր բիշ մը: Կէս ժամ ետքը նայիս ատ Գերմանացիին բարեկամները եկան ինձի ըսին որ կը ցաւի եւ դած դէպքին համար ու պատրաստ է ներում խնդրել ինչ: Վրաս քաջութիւն մը եկած էր, զեմ՝ զրի, շըլա՛ր՝ ըսի, ես մենամարտիմ պիտի: Վերջապէս շերկնցնեմ, բարեկամներս շուրջս ժողովուեցան, անոր բարեկամներն ալ, զիս համագեցին, ես ալ զիջում ըրի: Հակառակորդս եկաւ ինչ ներում խնդրեց: Հրաւիրեցի զինքը շամբանեա խմելու ինձի հետ. ընդունեց: Շնորհքով մէկն էր: Հրեայ է եղեր: Հեռեւեալ օրը լրագիրները խօսեցան այս զէպքին վրայ, զիս գովեցին, անկեղծ հայրենասէր կոչեցին զիս... Ահա՛ իմ հայրենասիրութիւնս, վերջացուց Մարտիկ աղա, յաղթական իր ունկնդիրներուն դառնալով բոլորակի:

— Է պալօ՞նը, պալօ՞նը, հարցուց Զարուհի:

— Պալօնը՛, հա՛, ասանկ բան մըն ալ ան է: Ասկից 15—17 տարի առաջ, 1881ին՝ էր թէ 83ին, աղէկ մը չեմ յիշեր, ազգային լրագիրներուն մէջ ազդ մը կարդացի թէ զազիացի զիսնական մը օգնութիւնով ճամբորդութիւն պիտի ընէ եղեր Պոլիս, ե թէ պատրաստ է իրեն հետ առնելու մինչեւ չորս հոգի, պայմանաւ որ 300 ֆրանք վճարեն իրեն այդ ճամբորդութեան համար: 15 օր պայմանաժամ տուած էր: Շաբաթ մը վերջը, լրագիրներուն մէջ կարդացի ճամբորդներուն անունը. մէկ զազիացի, մէկ իտալացի, մէկ յոյն... հայ չկար մէջը. լրագիրները կ'ըսէին որ ամօթ չէ՞ մեզի որ մեր մէջէն մէկը չելար կոր... Ես ալ շատ բարկացայ, ամչցայ. ինչ, Յոյնը, խէկ Յոյնը համարձակի աէ Հայը վախնայ տեղը նստի... Ինչ ամօթ մեր ազգին համար: Չորս հինգ օր մնացեր էր պայմանաժամը լրանալուն. հապա տաճիկ մը ելլա՛ր այդ շորրորդ տեղը զրաէ՛ր նէ... Ալ չզիմացայ... միտքս զրի որ ես ելլամ... ինձի հետ հայ անունը բարձրացնեմ... միտնիմ նէ՛ թո՛ղ մեռնիմ... զէթ վրաս պիտի խօսուի եա՛, զէթ պատմութեան մէջ անունս պիտի յիշուի եա՛... Թող օտարներն ալ տեսնան որ հայը քաջ է: — Գոցի կան. խալճար որ շատ 100 ֆրանքը վճարեցի. ու սպասեցի երկնային ճամբորդութեան օրուան: Լրագիրներուն մէջ անունս գրուեցաւ մեծ գովեստներով: Ես շիտակը քիչ մը զոզի մէջ էի, երբ առտու մը կարդացի որ զազիացի գիտնականը ծանր կերպով հիւճնդցեր է եղեր եւ չպիտի կըրնայ եղեր որոշուած ճամբորդութիւնը կատարել. ուստի կ'աղաչէ որ կանխավճարները հտ առնուին... ես ալ գացի ստակս ետ առի:

— Ահաւասիկ իմ հայրենասիրութիւնս, գոռաց նորէն Մարտիկ աղա, շատ մը նորելուկ, ո՞ն մօտա զէլզէկնեւրուն հայրենասիրութեանը չի նմանիր... խօսքս պարսնին համար չէ՛, աւելցուց Սուրեանին դառնալով:

(Շարունակելի)

ՊԱՐՈՅՐ

ՕՐՈՒՍԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Խորին յուզումով մը ներկայ գտնուեցայ, «Պայրըն» քննիչութեան հրաւերին վրայ, Լոնտոնի Ս. Պետրոս եկեղեցիին մէջ մատուցուած գահաբանական աղօթքին՝ կրեւտի ազատութեանը առթիւ: Կրեւտական եւ հելլենական դրոշակներուն առջեւ, որոնք խորանը կը զարդարէին, «Ջրեղ Աստուած փառաբանեմք»ին խոր գաշնակութիւնը կը բարձրանար աւետարտ, ու կը հռչակէր նոր թուականի մը բացումը կրեւտի բազմաշարժար ժողովրդին համար: Քարողին մէջ, զոր խօսեցաւ Պատ. Չարլզ Կոր, հա՛րկ է ըսել թէ չմտոցուեցան Հայաստանի տառապանքները, եւ մաղթանքներ մեր դժբաղդ երկրին ալ ազատութեանը համար:

Այդ հանդիսուոր արարողութեան նախորդ ու յաջորդ օրը, անգլիական լրագիրներն ալ յիշեցին Հայաստանը: «Տէյլի Բրոնիքը» կ'ըսէր. «Կը մնան զեռ Մակեդոնիան, Ալպանիան, Եպիրոսը, որոնց ազատութիւն խստացուած է Պերլինի Դաշնագրով: Ու, այս ամէնէն զատ, կը մնան զեռ Հայերը — կամ այդ անգլթօքն խաբուած ու անգլթօքն լքուած ազգին մնացորդները: Գահաբանական աղօթքները լաւ են, բայց զեռ շատ բան կը մնայ ընելիք:» Ու զարձեալ. «Հայաստան ծովէն հեռու է, եւ Ռուսիա, իրեն յատուկ պատճառներով, օգնութեան ձեռք չկարկառեց մարտիրոս-ազգին, ա՛լ աւելի՛՛ մահուան դատապարտեց զանի: Բայց ա՛լ թող պիտի չի արուի որ ուրիշ ո եւ է ցեղ բնաջինջ ըլլալի:»

Սպասելով այն գեղեցիկ ու տրամօրէն հեռուոր օրուան որ Հայաստանի կացութեան նոյն իսկ մասնակի բարեփոխումը պիտի աւետէ, կրեւտէի խնդրին վերջացումը արեւելեան մշտաբաց հարցին մէջ առաջնութիւնը կուտայ հիմակ Մակեդոնական խնդրին:

Մակեդոնիոյ բոլոր բնակիչները, Պուլկարները, Սերպերը, Յոյները, Ռումէլները, Ալպանիացիները, Թիւրքերը եւ նոյնիսկ Հրեաները համազուած են թէ կրեւտական խնդրին փակումը՝ մակեդոնականին բացումը կը նշանակէ: Բայց Պուլկարներէն, միւս ազգայնութեանց ներկայացուցիչները երկիւղով եւ անձկութեամբ կը խօսին այդ պատահականութեան մասին: Պուլկարները վստահութեամբ, անհամբերութեամբ եւ զսպուած հրճուանքով կը սպասեն ատոր:

Մակեդոնիոյ պուլկարական շարժման պարեմազուրկութիւնը մին վերջերս կը հաւաստէր «Տէյլի Թէլէկրաֆ»ի մէկ թղթակցին թէ բացարձակապէս անհնար է որ Ռուսիա ալ աւելի ուշացնէ Մակեդոնական խնդրին լուծումը այնպէս ինչպէս պահանջած էր Սան-Սթէֆանոյի գաշնակութիւն մէջ, որովհետեւ՝ այլապէս՝ աւստրիական եւ կաթօլիկ բորբաւանտան ժամանակ ու յաջողութիւն պիտի վաստակէր, եւ Մակեդոնիան՝ ձարին հովանիին ներքեւ սլաւական միացեալ երկիրներու մեծ ծրագրէն զուրս պիտի մնար: Նոյն

խակ եթէ Ռուսիա սպասել ուզէ, կամ ուրիշ տեղ զբաղած ըլլալով՝ ստիպուի սպասելու, Պուլկարիա չի կրնար սպասել, որովհետեւ եթէ այդպէս ընէ, Յոյները որոնց ուժ կուտայ Անգլիա, եւ Սերպերը՝ որոնց կոնակ կեցած է Աւրստրիա, զիրեցերնին ամբողջով ժամանակ պիտի գտնէին, եւ պիտի արգիլէին ամբողջ Մակեդոնիոյ ձուլումը Մեծ Պուլկարիոյ մէջ: Կրետէ հիմա արդեամբ հեղինական զերիշխանութեան տակ գտնուելով, Յունաստանի բարոյական եւ քաղաքական ազդեցութիւնը պիտի զօրանայ հարաւային—արեւմտեան Մակեդոնիոյ մէջ, եւ Մակեդոնիոյ այդ մասին Պուլկարիոյ միանալ չուզելու բաղձանքը տարուէ տարի պիտի աւելնայ: Միւս կողմէ, Պուլկարիա շատ սովորէ աչքով կը դիտէ Սերպիոյ գործունէութիւնը Մակեդոնիոյ մէջ: Սերպերը վերջերս վարժարան մը բացին Սկլանիկ, ուր, բացի սերպ հիւպատոսէն, մէկ Սերպ չի կայ: Գործոցներ բացած են նաեւ Մանասղըր, Օլորիտա, Վէլէս, Բրիլիբ, եւ վերջերս քսան զիւզ ազերսագիր մատուցած են Սկլանիկի կուսակալին սերպ գործոցներ բանալու համար: Արդ, ամէնուն յայտնի է որ Սերպիոյ կլմասական կացութիւնը շատ սղբալի է. զբամի չգոյութեան պատճառով Սերպերը բուն իսկ Սերպիոյ մէջ իրենց վարժարանները հեպհեաէ կը փակեն, եւ ինչպիսի է թէ ուսկից զբամ կը գտնեն կոր Մակեդոնիոյ մէջ գործելու եւ թիւրք պաշտօնեաները կաշառելու համար: Ո՛չ անշուշտ Ռուսիայէն, որ Պուլկարներուն կողմէ եւ կ'ատէ Միլան թագաւորը. զբամը Աւստրիայէն կուզայ կոր: Ակնհերեւ է թէ Մակեդոնիոյ մէջ Սերպերուն ու Պուլկարներուն կոխը՝ իբրք Աւրստրիոյ եւ Ռուսիոյ կոխն է այդ նահանգին մէջ:

Երբ անցեալ ամառ Ֆերտինանա իշխանը Բեղրպուրի գնաց, պարզապէս Մակեդոնական խնդրին համար էր, եւ Պուլկարիոյ գահաժառանգ մասաղատի Պորիս իշխանը անձամբ Ջարին ներկայացնելը՝ լոկ ճարտար պատուակ մըն էր: Մակեդոնիա արդէն տարիներէ ի վեր պուլկար կառավարութեան կողմէ շրջանակներու բաժանում է. իւրաքանչիւր շրջանակի զլուխը կը գտնուի քաղաքական գաղտնի գործակալ մը, որ իր հրամանները կը ստանայ «առեւտրական գործակալներէն» որոնք արձակ համարձակ եւ Դրան հաւանութեամբ կարողուած են Սկլանիկ, Մանասղըր եւ Իւսկիւպ: Այդ գաղտնի գործակալներուն վերջին երկու տարուան տեղեկագիրները տեսակ մը անձկութիւն կը մատնեն, ո՛չ այնչափ սերպ բրտականտային կամ ուսմանական շարժման զարթումին համար, հապա սա իրողութեան համար որ Մակեդոնիոյ սլաւ ազգաբնակիւթիւնները, ամէն տեսակ գործակալներէ ա՛յ ճանձրացած, սկսած են մտածել թէ լաւագոյն է թերեւս ո՛չ Պուլկարիոյ կողմը հակել եւ ո՛չ Սերպիոյ, հապա քաղաքական ինքնօրինութիւն ձեռք բերել սուլմանէն իրենց համար:

Հաստատուած իրողութիւն մըն է թէ՛ Ռուսիա երթալէն առաջ՝ Ֆերտինանա իշխանը խորհրդակցութիւն մը ունեցաւ Մակեդոնական կեդրոնական Յանձնախմբին նախագահ զօրավար Նիքոլայէֆի եւ Իւսկիւպի «առեւտրա-

կան գործակալ» Պ. Բիզովի հետ, որ պուլկար կառավարութեան ոչ-պաշտօնական «Մակեդոնիոյ նախարարը» կը նկատուի: Յայտնուեցաւ թէ երկուքին ալ յայտարարութիւնները նոյնն էին. կորսնցնելու ժամանակ չի կա՛ր: Ռուսիոյ պատասխանը, զոր Ֆերտինանա իշխանը զարձին Սոֆիա բերաւ, յուսախաբութիւն մը եղաւ պուլկար հայրենասերներուն համար. Ռուսիա կը փափաքէր որ շարժում մը չընէին՝ մինչեւ որ ինք նշանը չտար: Եթէ այդ նշանէն առաջ շարժէին՝ հետեւանքներուն համար իրենք միայն պատասխանատու պիտի մնային, որովհետեւ Ռուսիա չէր կրնար թողուլ որ Նիքոլայէֆ Սոֆիայէն եւ Բիզով Իւսկիւպէն վարէին իր քաղաքականութիւնը: Եթէ սակայն համբերութեամբ սպասէին եւ հաւատարմօրէն հետեւէին Ռուսիոյ առաջնօրգութեանը, Ռուսիա «պուլկար ազգին» (ո՛չ Ֆերտինանա իշխանին) կ'երաշխաւորէր Մակեդոնիոյ միացումը, Իկնաթիւզ զօրավարին Սան—Սթէֆանօ դժած սահմաններովը: Ֆերտինանա իշխանը խօսք տուած էր ու եւ շարժում չընել՝ կանխաւ Ռուսիոյ հաւանութիւնը շտաած: Այդ խոստումը կը պահէ կոր այժմ, եւ պաշտօնական Պուլկարիան ապահովապէս հանգրստ պիտի մնայ այս ձմեռ եւ յառաջիկայ գարնան:

Բայց Մակեդոնիոյ մէջ կազմակերպուած խումբերը անհամբերութենէ կ'եռան, եւ Յոյներուն, Սերպերուն կամ Ռումէներուն տեղական ամենափոքր յաջողութենէն կը խուճապին: Անգլին, բուն Պուլկարիոյ մէջ, հարկը հազարաւոր զեղացիները որոնք տարուէ տարի մէկ լկ (1 ֆրանք) կուտան Մակեդոնական Յանձնախմբին, որովհետեւ իրենց ըսուած է թէ Մակեդոնիոյ միացումէն յետոյ՝ անոր բերրի դաշտերը ու արօտաանեղինները անգամներուն միջեւ պիտի բաժնուին, անհամբերութեամբ կը սպասեն իրենց զոհողութեան արդիւնքը քաղելու:

Խնդիրը սա է. Ֆերտինանա իշխանը եւ իր կառավարութիւնը պիտի կրնա՞ն — եւ ո՞րչափ ատեն — զսպել հայրենասերներուն անհամբերութիւնը թէ՛ Պուլկարիոյ եւ թէ՛ Մակեդոնիոյ մէջ: Ժամանակ վատակելու համար պուլկար կառավարութիւնը ճարպիկ թելադրութիւն մը ըրած է, — սա թէ լաւագոյն է նախ խնդրագիր մը ներկայացնել Մեծ Պետութեանց որ ինքնօրինութիւն շնորհէն Մակեդոնիոյ՝ քրիստոնեայ ընդհանուր կառավարիչով մը որ Մակեդոնիոյ ազգային երկրապահ զօրքին ընդհանուր հրամանատարը ըլլայ: Խնդրագիրը արդէն մատուցուած է կ. Պոլսոյ գեղապաններուն եւ անոր բազմաթիւ օրինակները կը պտըտին Մակեդոնիոյ մէջ:

Թիւրքերը այս ամէնը աղէկ գիտեն: Թիւրք զօրավար մը ըսեր է Տէյլի Թեյէկրուֆի թղթակցին. «Կ'երեւայ թէ մեր խլամերը առ է, կրետէն յետոյ Մակեդոնիան ալ պիտի կորսնցնենք: Գիտենք ասիկա: Բայց մի՛ կարծէք թէ Մակեդոնիան պիտի կորսնցնենք այնպէս ինչպէս կրետէն կորսնցուցինք: Մինչեւ որ մէկ հոգի մնայ՝ պիտի կուտինք, ու ամբողջ տշխարհի գէմ: Առ այժմ վտանդ չի կայ որ ժողովուրդը ապստամբութիւն մը յարուցանէ. այս պիտի ապստամբութիւն մը արդէն բնաւ գոյութիւն ունե-

ցած չէ: Բայց եթէ տեղեկներ որ Պուլիարները Մակեդոնիա կ'արշաւեն, պիտի հասկնանք որ ոտս սպաններ կ'առաջնորդեն անոնց, եւ թէ ոտս զօրքերն ալ փոքր—Ասիա մըսնելու վրայ են: Պատրաստուած ենք այդ օրուան: Մեր Մակեդոնիոյ պահակազօրքը միծապէս աւելցուցած ենք, եւ հին հրեաններուն տեղ նորեր կրտս ձեր: Ալլահ բերիմ:»

Չինուորի պատուարեր արի խօսքեր են ասանք, որոնք սակայն վեպերուն ընթացքին վրայ վճռական ազդեցութիւն չեն կրնար ունենալ: Նշանակելի իրողութիւն մըն է սակայն որ թիւրքիս այս միջոցին հարաւային Ռուսիոյ մէջ մեծ քանակութեամբ ձի գնելու վրայ է կ'ըստի թէ սուլթանը սրտած է, Վիլհելմ կայսեր թելադրութեան վրայ, 25,000 նոր հեծելազօրք աւելցնել իր բանակին վրայ:

Ապտիւ Համիտ սակայն ուրի զէմ ուժ հանող մարդ չէ: Իր վիւանագիտական ճարտիկութեանը վրայ աւելի վստահութիւն ունի քան իր զինուորական զօրութեանը: Ռուսի նորէն սկսած է իր հին խաղը, այս անգամ Մակեդոնացիներուն աչքին ցուցնելով բարենորոգութեամբ յուսածիմազ հեռագրակերը, ու լուր դրկած է կ. Պուլոյ պուլիարական գործակատ սրին՝ հասկնալու համար թէ ինչ են Մակեդոնիոյ ժողովրդին պէտքերը եւ որոնք են անոնց գոհացում ապու լաւալոյն միջոցները: Ասիա, ճգնաժամներուն մտակցած ասանք, իր մեծ զէնքն է. բայց ըսել չէ ամէն ատեն կը յաջողի:

Որովհետեւ, ինչպէս քիչ մը վերը ըսի, խնդրը լսի Մակեդոնիոյ ու թիւրքիոյ մէջ չ'է, այլ Ռուսիոյ եւ Ալբանիոյ: Ու մէկէ աւելի պատճառներ կան կարծելու թէ այդ երկու պետութիւնները, որոնք 18 ամիս առաջ միացան՝ կոխը թեւալիոյ մէջ սահմանափակելու, ա'լ նոյն համաձայնութիւնը չունին: Ռուսիա իր ազդեցութեանը տակ առած ըլլալով Պուլիարիան, Ալաբիա—Հանգարիս ալ Սերպիան իր գերիւր առաւ, եւ երկու մեծ պետութիւնները իրարու զէմ կը մրցին Եւրոպական թիւրքիոյ մէջ: Երբոր Սերպիա այս յալիսին իր ծանուցագիրը ներկայացուց Իրան՝ խտաւ բարքերով իր սահմանապիտին վրայ կատարուած հարստահարութեանց զէմ, կ. Պուլոյ գերմանական զեռպանը սիր այժմար այժ տուաւ Սերպիոյ բողոքին: Իրաւ է որ ասիկա արգելք մը չեղաւ թիւրքիոյ՝ բացէ ի բաց սուրանալու ծանուցագրին մէջ յիշուած բոլոր եղելութիւնները եւ ո եւ է պատասխանատուութիւն մերժելու:

Մորեիկի Բոսոյ, որ Անգլիոյ պահպանողական այն հին պարոցին կը վերաբերի որ կը կարծէ զեռ թէ արեւելեան հարցը քննադատելու լաւագոյն միջոցը թիւրքիան վերակազմելն է, կը յուսայ հիմակ թէ կրետէի կարուստը իրատ մը պիտի ըլլայ սուլթանին՝ իր պարտականութիւնները կատարելու երկրին խաղաղացմանը համար: Մորեիկի Բոսոյ չի ծանչնար կոր թիւրքերը, այն բան մը շտոր վող, բանէ՛ մը չխրատուող թիւրքերը:

Լ. ԶՊՐԹՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

Անաւաստիկ նորագոյն տեղեկութիւնները Հայաստանէն, գործեր կը ձաղորդի Ռիւդերի կ. Պուլոյ բարակիցը:

«Բաղէիկե տեղեկութեան մասնաւոր նախակերտ մանրամասն տեղեկութիւններ կուտան վերջերս պատճառած իւրազօրքեանց մասին: Ժողովուրդը շատուց է անհրաժեշտ մէջ էր Քիւրտերուն սպանուողիքներուն պատճառաւ, որ իւրեր կը մեղադրէին Հայերը թէ իրենց ցեղասպանութիւն մեկուն որպիսի սպանում եւ: Հոկտեմբեր 30ին շուր տարածուեցաւ թէ հայ յեղափոխականներու խուճկ մը Բազքիետ անաւարտած էր, Բաղէիկե իրր երկու ժամ հետո զեղ մը: Այս շուրք տագնապ առաջ բերաւ, որովհետեւ միւս սիւրմաները իրր արդարացուցիչ պատճառ մը կեկտեցին զայն Հայերուն վրայ յարձակելու: Հետեւաբար թիւրքերու ստուար խուճկ մը ասիերիկներու շահայիկ վրայ յարձակեցաւ: Հայ ասիերիկներու խանութներուն շատրաւաբի տրուեցան, Հայ մը սպանուեցաւ ու քսան Հայ վիրաւորուեցան միեկէ որ իշխանութիւնները միջամտեցին ու վերջ տուին խուճկներուն: Կուտակալը անձամբ յարգրեց աւարտուեցին որ նոր խուճկներէն լայնութեան, եւ բարեկարգութիւնը վերանստատուեցաւ: Երկուստեք զեմ Բաղէիկ Միւրթիկե Հայոց առաջնորդը, զինուորներու ջակտի մը ուղեկցութեամբ, թիւրք եւ հայ բաղերը պարտեցան՝ բախանձերով միւսիւրմաները որ անկարտ կեկան, եւ քրիստոնէականքը՝ որ ա'լ վախ չունէ կան: Այդ իրիկուներ սակայն, Բազքիետէ երկու Հայոց պիտի բերուեցաւ Բաղէ: Ինչ յայտնի չէ թէ ինչ պատճառ է այս գիշեր մէջ, բայց կը վախցուի որ ժանր խուճկներ տեղի ունեցած եւ:

«Հայիական նամակներէն մէկ քանիկէ մէջ կարգութիւնը շատ ողբալի է: Աղբաւորներէն ու ընտանեկաններէն տեղ կը տիրապետեն, եւ Քիւրտերը կը շարունակեն կողոպտել ու ճարտատմարել Հայերը, թեպէտ անաւարտ կան ջարդերը պարտած են: Այս օրերս կ, Պուլոս անաւ Երզնկայի գաւառին մէջ վերջերս կատարուած ռաիւներու խուճկ ցանկի մը ռաիւները՝ որոնց զոնէրն եւ միշտ Հայերը: Վանի մէջ կարգութեան ալ աւելի գեշ է որովհետեւ հոն Քիւրտերը կը յարձակին թէ՛ Հայերուն եւ թէ՛ թիւրքերուն վրայ, թեպէտ անշուշտ նախընտրութիւնը տարով միշտ Հայերուն: Այս վտանգին վրայ աւելցուցէք սա որ զինուած Հայերու պատիկ խուճկեր երբեմն երբեմն տուաւ կան կամ պարսկական սանձակագիւղէն ստիկն կ'անցնին, եւ, թեպէտ թիւրք զինուորները անուց միջոց չեն բողոք մեծ վնաս անացնելու, եւ սակայն անուց փորձերը կը կատարեն միւսիւրմաները կատարեցնելու բնորոշ քրիստոնէականներուն:»

Հ Ա Ս Յ Է

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.